




ԷՋՄԻԱՇԻՆ

1980

ԺԲ

ՀՊԵՐԿ



Լ Է
ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿԵԿԿԻՄԲԵՐ

1980



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԿՈՆԴԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ**

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԻ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՇ
ԵՒ ԱԹՈՌԱԿՑԻՆ ՆՈՐԱ Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ-Ի, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ԵՂԻԾԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ
ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՀԱՄՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ
ՔԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԵԱՆ ՀԱՅՈՑ

Հիմաուրց մայր երկիրը Հայոց, այս տարի նոյեմբերին բոլորում է
վաթսուն տարիները իր նոր պետականության, Հայկական Խորհրդային
Հանրապետության:

Մօտ երեքհազարամեայ մեր պատմության հորիզոնի վրայ, վերջին
վաթսուն տարիները հանդիսացան մի ժամանակաշրջան՝ հայ պետության
վերականգնման ու անվտանգ գոյատևման, լայնատարած քաղաքաշինու-
թեան, տնտեսական արմատական ծառայուն վերակառուցման, գիտություն-
ների ու ազգային մշակույթի ծաղկման՝ խաղաղության ու անվտանգության
պայմաններում: Մի ժամանակաշրջան, ինչպիսին քիչ անգամներ տեսել էր
բազմաշարքար հայ ժողովուրդը իր պատմական մայր թողի վրայ:

Վերջին վաթսուն տարիների հայրենական նուաճումները, փայլուն կերպով ցույց տուեցին թե հայ ազգը կարող է հպարտ լինել ոչ միայն անցեալից ժառանգած իր անկրկնելի արժէքներով, այլև իր ստեղծած նոր կեանքով ու նոր արժէքներով, որոնք աննախատեսելի չափերով հարստացրին հայ ստեղծագործ մտքի ու հոգու գանձարանը:

Վերածննդի այս շրջանում, հայաստանցի ժողովուրդը չնմանուեց Աւետարանի այն ծառային, որ իրեն տրուած քանքարները միայն պահել-պահպանել գիտեցաւ, այլ նմանուեց այն միւս ծառային, որ կարողացաւ իր ստացածը, իր ունեցածը անեցնել, բազմապատկել, որով և արժանի դարձաւ Յիսուսի գովասանքին՝ «զի ամենայնի որ ունիցի՝ տացի և յաւելցի» (Մատթ. ԻԵ 29):

Այս վաթսուն տարիների ժամանակահատուածում հայաստանցի ժողովուրդը, ազատուած հազար տարիների գերութիւնից, ցրումից ու քայքայումից, դարձաւ՝ իր մայր հողի վրայ ապրող ու զարգացող ազգութիւն, օժտուած սեփական պետական կառոյցով ու ղեկավարութեամբ, իր ազգային դրօշով ու լեզուով, ոգեշնչուած անցեալի արժէքներով ու ապագայի վստեղազանքներով:

Այս շրջանում է որ Արևելահայաստանը քառապատկեց իր ազգաբնակչութեան համրանքը և ստեղծեց իր նոր քաղաքամայր Երևանը, այժմ աւելի քան մէկ միլիոն բնակիչներով:

Այս վաթսուն տարիներին հիմնուեցին ու ծաղկման հասան՝ Գիտութիւնների Ակադեմիան, Պետական Համալսարանը, Մատենադարանը, Աստղադիտարանը և բազում գիտական, կրթական ու գեղարուեստական հաստատութիւններ: Նոր Հայաստանը հայ ժողովրդին ու պատմութեանը պարգևեց՝ Յովհաննէս Բաղդասարան, Վիկտոր Համբարձումեան, Հրաչեայ Աճառեան, Ալեքսանդր Թամանեան, Մարտիրոս Սարեան, Արամ Խաչատուրեան, Եղիշէ Զարեան, Պարոյր Սեակ:

Այս վաթսուն տարիներին բարձրացան յուշարձանները Վարդան Մամիկոնեանի, Ծիծեռնակաբերդի և Սարգսրապատի:

Նոր Հայաստանի արևի տակ իր վերածնունդն է ապրում նաև մեր Մայր եկեղեցին, հոգևոր կեանքի զարթօնքով, տասնեակ պատմական յուշարձան վանքերի ու եկեղեցիների վերանորոգումով և յատկապէս Սուրբ Էջմիածնի աննախընթաց շքեղացումով:

Մեր օրերի հայ մարդու ազգային խղճի տենչանքն է, որ վերածնուած Հայաստանը, հպարտ ու ինքնավստահ կանգնած վաթսուն տարիների սեմին, իր հայեացքը ուղղած դէպի ապագան, նոյն ստեղծագործ եռանդով շարունակի իր յաղթական երթը, եղբայրական ազգութիւնների առաջին շարքերում, ապահովութեան ու խաղաղութեան նոր պայմաններում, քայլ առ քայլ հասնելու կամեցողութեամբ՝ իր արդար սպասումների բարձունքին:

Մեր օրերի հայկական պետութիւնը միակ իրական ու ամրակոտ պատուանդանն է հայոց հայրենիքի ու ազգի գոյատևման, և միակ ճշմարիտ գրաւականը նրանց ապագայ է՛լ աւելի պայծառ ճառագայթութիւն:

Այո՛, «անցան վշտի դարերն հայոց», եկաւ «հանութ կեանքի արշալոյսը վառ հազած» և հայոց «քաջ որդւոց սուրբ արիւնով» ծնունդ առաւ մի նոր հայրենիք, հզօր հայրենիք, լոյսի հայրենիք, յոյսի հայրենիք:

Հայէ՛ր, մայր երկրից և բոլոր երկրներից, միացէ՛ք այսօր հոգով ու սրտով և փա՛ռք տու՛ք նախախնամողն Աստծուն, անցնող վաթսուն տարիների համար, և աղօթեցէ՛ք որ հայրենական վերածննդի ու ծաղկման

տարիները անվերջ շարունակուեն, որ ամէն տեսակի փորձութիւններ ու վտանգներ հեռու մնան մեր հայրենիքի սահմաններից, որ այլևս երբեք չար ձեռքեր չքանդեն Տունը Հայոց, որ այլևս արցունք չտեսնեն մեր մայրերի և քոյրերի աչքերը, որ Հայաստանը յաւիտ մնայ կանգուն ու անսասան, շէն ու խաղաղ, և հայոց սեղանների վրայ միշտ առատ լինեն՝ հացն ու լոյսը, երգն ու աղօթքը, որ հայաստանցին ամէն առաւօտ իր հարևանին ողջունի աւանդական «քարի լոյս»-ով:

Նոր Հայաստանը, ապրող, շնչող ու ծաղկող Հայաստանը, վաթսուն տարեկան է՝ «Հազար շեփոր հնչեն թող այս առաւօտ»:

Օրհնութիւն և լոյս և խաղաղութիւն մեր վերածնունդ հայրենիքին, յաւերժական Մայր Հայաստանին:

Արդ, ջերմ սրտով հրաւեր եմք կարդում, որ առաջիկայ նոյեմբեր ամսին, Հայաստանեայց առաքելական բոլոր եկեղեցիներում մատուցուեն գոհաբանական մաղթանքներ վասն անսասանութեան և յաւերժ ծաղկման ամենայն Հայոց մայր Հայրենիքի:


«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ»: Ամէն:

Հարպիտ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 22 մայիսի
1980 փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌԵԽԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
1020





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՀԱՅՐԱԴԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ՝
ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ԺՈՂՈՎՈՒՄ

(Երևան, 24 նոյեմբերի 1980)

«Հայրենիքի պայծառ հորիզոնը նորից մթնեց. խաղաղ կյանքը նորից խանգարվեց. հաչ արյունաքամ ժողովուրդը սահմանների վրա տեղահան, բաց երկնքի տակն է մնացեր. մեր սահմանների վրա նորից գոռում են թնդանդամները, դարձյալ երկու տարի առաջվա մղձավանջը տիրեր է ամենուրեք. և ամենքի բերնից լսվում է «գալիս է թշնամին»: Այո՛ Հայոց ժողովուրդ, գալիս է թշնամին, անգույթ թշնամին, նա արդեն մեր դռան, մեր դեմ կանգնած է և յուր վերջին ուժերը հավաքած կոխվ է մղում և ուզում է մեզ բոլորովին տանից, տեղից, հայրենիքից և ազատությունից զրկել և Իսրայելի մահն մեր ոսկորները անապատի մեջ ցիր ու ցան անել»:

Ահա սարսուռ ազդող ահազանգը Գևորգ Ե կաթողիկոսի 4 հոկտեմբեր 1920 թվակիր կոնդակով:

1918-ի Սարդարապատի հաղթանակով փրկված երկիրը Հայոց, 1920-ի աշնան նոր ճգնաժամի առաջ էր կանգնած և Ալեքսանդրապոլի սև դաշնագրով, Արևելահայաստանի կյանքի հորիզոնի վրա ուրվագծվում էր ստույգ վտանգը մի երկրորդ Եղեռնի: Եթե այդ հաջողվեր նույն մեր թշնամուն, հայոց հայրենիքը մնալու էր այլևս անցյալի հուշ և թանգարանի առարկա:

Մի պահ թվում էր, թե հաչ ժողովուրդը պիտի ընդմիշտ կորցներ այն, ինչ շահել էր Սարդարապատի հերոսների արյունով:

Նախախնամությունը սակայն այլ կերպ էր սահմանել մեր ճակատագիրը: Եվ Հայաստանի մթագնած երկնակամարի վրա նորից փայլատակեց լուսավոր աստղը Հյուսիսի: Մեր դարավոր թշնամու դեմ, վերստին ծառացավ մեր դարավոր հզոր բարեկամը՝ ռուս ժողովուրդը, իր կարմիր բանա-

կով, որ պատռեց սև դաշնագիրը Ալեքսանդրապոլի և հեռու շարտեց հայ արյան ծարավի գորքը Կարաբեքիր փաշայի:

Այսպես ահա փրկվեց անդունդի եզրին հասած մեր ժողովուրդը: Մարմին, հոգի առավ նոր Հայրենիքը Ամենայն Հայոց՝ խաղաղության, ընկերային արդարության և ազգային ազատության շեփորումով:

Այսպես ահա ստեղծվեց նոր պետությունը հայկական, իբրև լիիրավ ազգային հանրապետություն՝ սովետական եղբայրացած ժողովուրդների մեծ միության մեջ:

Այսպես ահա ապահովվեց անվտանգ գոյատևումը հայոց մարտիրոս ժողովրդի, հայրենական համատարած վերաշինությամբ, տնտեսական անձախընթաց վերելքով ու ազգային մշակույթի լուսասփյուռ ծաղկմամբ:

Վաթսուն տարիներ շարունակ նոր Հայաստանը հաղթական երթով օրօրի բուժեց իր խոր վերքերը, վերակառուցվեց, զարգացավ, աճեց ու շենացավ իբրև իրականացած երազը հայոց բազում սերունդների:

Այսօր, Սովետական Հայաստանում, հայ մարդը ապահովված է՝ խաղաղ ու անվտանգ ապրելու իրավունքով, աշխատանքի իրավունքով, իր հայրենիքը անդադրում կերպով կառուցելու իրավունքով, ուսում և կրթություն ստանալու իրավունքով, կրոնական պաշտամունքի անկաշկանդ իրավունքով, իր ազգային մշակույթը ազատորեն զարգացնելու իրավունքով, իր մայրենի լեզուն պետական լեզու հռչակած, իր ազգային դրոշի ներքո: Արդի Հայաստանը միակ հույսն ու իրական երաշխիքն է մեր ազգային բոլոր արդար իղձերի կենսագործման:

Ահավասիկ այսօրվա մեր ուրախությունը, մեր մխիթարությունը, մեր արդար հպարտությունը: Այսպես է, որ այսօր Հայոց Հայրապետ Ջեր մեջ է գտնվում, ոչ թե հայրենիքին սպառնացող վտանգը ահագանգելու, այլ Սուրբ Էջմիածնից բերելու ձեզ բոլորիդ մեծ ավետիսը հայ հայրենիքի և ժողովրդի վերածննդյան:

Կիլիկյան մեր թագավորության անկումից վեց հարյուր տարիներ հետո, առաջին անգամ է, որ Հայոց մի Հայրապետ անսահման մխիթարությունը ունի նման ավետիս բերելու իր ժողովրդին՝ որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Այս ավետիսով Մենք ողջունում ենք ձեզ բոլորիդ, ի մասնավորի ձեզ, հարազատ զավակներ մեր ժողովրդի, որ եկել եք հեռու երկրներից, ձեր հայաստանցի քույրերի ու եղբայրների հետ միատեղ տոնախմբելու վաթսուն տարիներ հասակ նետած նոր Հայաստանը, հավիտենական Հայաստանը մեր ժամանակաշրջանի պայմաններում:

Այս ավետիսով կոչ ենք անում ձեզ ամենքիդ և ձեր միջոցով հյուրընկալ տարբեր երկրներում ապրող մեր բոլոր զավակներին, որ իրենց հոգիների հայացքը միշտ սևեռած պահեն դեպի Սուրբգրական Արարատը Ամենայն Հայոց, դեպի լույսերը նոր Երևանի, դեպի Լուսավորչյան անմար կանթեղը, Սուրբ Էջմիածնից ճառագայթող:

Սուրբ Էջմիածնից ճառագայթող օրհնությունը և լույսը նոր Երևանի, ահա ամուր պատվանդանները սփյուռքի հայության գոյատևման, ահա հիմքերը մայր երկրում և արտասահմանում բնակվող հայերի ազգային միասնության, ահա մղիչ ուժերը՝ հայության հոգու անաղարտ պահպանման:

Համազգային ցնծության այս օրերին, երբ նոր հույսերի, նոր սպասումների հորիզոններ են բացվում մեր բոլորիս գիտակցության մեջ, Մեր իղձն ու հրավերն է, որ դուք, հայաստանցի մշակութային գործիչներ, և դուք, արտա-

սահմանի հայ համայնքների ներկայացուցիչներ, նոր ուղիներ որոնեք, ավելի և ավելի ամրապնդելու համար հոգևոր-մշակութային կապերը և եղբայրական գործակցությունը հայ հայրենիքի և տիրուքի միջև:


Մեր վերաշինված մաշիկ երկրի վայելուքն տարիների վիթխարի իրազոր-ծումների սեմին, Հայոց Հայրապետը մի նվիրական ըղձանք ևս ունի, որ հայ ժողովուրդը և իր հայրենիքը շարունակեն աճել ու հառաչադիմել նույն դրոշմի ներքո, սովետական եղբայրացած ժողովուրդների մեծ ընտանիքում, ազգային անվտանգության և մշտական խաղաղության պայմաններում: Գուցե ավելի քան այլ ժողովուրդներ, մենք՝ հայերս, բազում դարերի ողբերգական փորձություններից հետո, պետք է իմանանք գնահատել մեր կյանքի խաղաղությունն ու ապահովությունը: Հեռու, ամեն տեսակ պատերազմ համայն աշխարհից, հեռու՝ ամեն տեսակ պատերազմ մեր հայրենիքի սահմաններից: «Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեացին»:


Սիոնիներ մեր, դուք գտնվում եք Սուրբգրական Արարատի հայացքի տակ, Արարատ, որտեղից շատ դարեր առաջ թոփշք առավ խաղաղության աղավնին: Այս տոնական օրերից հետո, երբ դուք վերադառնաք ձեր տները, ձեր երկրները, իբրև մեր օրերի աղավնիներ, տարեք ձեր աշխարհների ավետիսը Ամենայն Հայոց Մայր Հայրենիքի փառավոր վերածննդի և անուվաճառաճ պատգամը խաղաղության:

Տարեք նաև պատգամը Հայոց Հայրապետի, որ ամենուրեք բոլոր հորիզոնների վրա լինի ավելի լույս, ավելի արդարություն և ավելի խաղաղություն:

«Պտուղ արդարության խաղաղության սերմանի այնցիկ որ առնեն զխաղաղութիւն» (Հակոբոս առաքյալ Գ. 18): Ամեն:

Կեցցե՛ վերածնված Մայր Հայաստանը, ճանապարհ՝ հայ ժողովրդին:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ
ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՀԱՐԳ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Երևան

Անհուն ուրախությամբ հանուն Հայաստանյայց Եկեղեցու ողջունում եմք
մեր Մայր Հայրենիքի վերածննդի 60-ամյակը և այսու ներկայացնում եմք
Մեր ամենաջերմ մաղթանքները, որ մեր երկիրը մասն հետ այսու շարու-
նակի իր շինարարական վերելքը և ծաղկումը կյանքի բոլոր բնագավառնե-
րում, ի բարօրություն և հերջանկություն մեր հարազատ ժողովրդի՝ սովետա-
կան ազգությունների եղբայրական մեծ ընտանիքում, միշտ խաղաղության
և ապահովության մեջ:


Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
29 նոյեմբեր 1980 թ.





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ
ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ

ՄԵԾԱՀԱՐԳ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Երևան

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սըր-
տանց շնորհավորում ենք Ձեզ և մեր հայրենի կառավարությունը՝ մեր Մայր
Հայրենիքի վերածննդյան վաթսունամյակի սեմին, ամենաջերմ մաղթանքով,
որ նաև հետ այսու երկար ու անհատկում տարիներ մեր մայր երկիրը ապրի
ու աճի ու ծաղկի խաղաղության մեջ՝ սովետական եղբայր օղորդությունների
մեծ միության մեջ, հերջանկություն մեր ազգի բոլոր զավակների, որ ի Հա-
յաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Ձեզ և ձեր բոլոր մեծարգո գործակիցներին ցանկանում ենք անսպառ
շինարար եռանդ ձեր հայրենաշեն առաքելության ճանապարհին:


Ամենախորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ս.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
29 հոկտեմբեր 1980 թ.





ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՆԴՅԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ ՀՈՒՆԵԼՅԱՆԸ

Այս տարի, նոյեմբերի 29-ին, լրացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման, հայ նոր պետության՝ Հայաստանի, Խորհրդային Հանրապետության հիմնադրման վաթսու տարին:

Իր ազգային վերածննդյան և նոր պետության հիշարժան այս փառավոր հոբելյանը բովանդակ հայությունը, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, տոնեց արժանավայել շուքով, ազգային հպարտության քերականքով:

Հոբելյանական, տոնական այդ օրերին ողջ հայությունը հպարտ էր, որ երկար դարերի ստրկությունից հետո նվաճել է իր հայրենի Հողն ու պատիվը, իր ազատությունն ու իր խաղաղությունը և վերակառուցում է իր ներկան և իր պայծառ ապագան:

Անցյալի ավելի քան վեց հարյուր տարիների բռնությունները, մահաբեր մրրիկները, որոնք անցան մեր երկրի վրայով, չկարողացան մարել ողջ հայության սրտում Հույսը և Հավատքը պայծառ ապագայի նկատմամբ:

Հայոց Հայրապետը՝ Հայաստանի Հանրապետության վաթսուամյակի առթիվ այս տարի՝ մայիսի 22-ին գրած իր սրբատառ հոբելյանական կոնդակում (Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1980 թ., № 5, էջ 3—5) վկայում էր.

«Վերջին վաթսու տարիների հալածական նվաճումները փալլուն կերպով ցույց տվեցին թե՛ հայ ազգը կարող է հպարտ լինել ոչ միայն անցյալից ժառանգած իր անկորնչելի արժեքներով, այլև իր ստեղծած նոր կյանքով ու նոր արժեքներով, որոնք

աննախատեսելի չափերով հարստացրին հայ ստեղծագործ մտքի և հոգու գանձարանը:

... Այս վաթսու տարիների ժամանակահատվածում հայաստանցի ժողովուրդը, ազատված հազար տարիների գերությունից, ցրվումից ու քայքայումից, դարձավ իր մայր հողի վրա ապրող և զարգացող ազգություն, օժտված սեփական պետական կառույցով ու ղեկավարությամբ, իր ազգային դրոշով ու լեզվով, ոգեշնչված անցյալի արժեքներով ու ապագայի վառ երազանքներով»:

Վերածնված հայ ժողովրդի ազգային հոբելյանական տոնի բարեբաստիկ առիթով իր սրտաբուխ օրհնությունը և իր ամենաջերմ խնդակցությունն է բերում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ի դեմս իր հայրենասեր Հայրապետի, և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, աղոթելով սրտեռանդն մեր պապերի լուսակերտ խորանների առաջ հայրենիքի բարօրության, խաղաղության, ապահովության համար, որպեսզի «Սրբնեցի, պահպանեցի և նախախնամեալ պահեցի Արևելեան կողմն աշխարհի, Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»:

Հայրենական վերածննդյան այս օրերին, նշում է Հայոց Հայրապետը, «Նոր արևի տակ իր վերածնունդն է ապրում նաև մեր Մայր Եկեղեցին, հոգևոր կյանքի զարթոնքով, տասնյակ պատմական հուշարձան վանքերով և եկեղեցիների վերանորոգումով ու հատկապես Ս. Էջմիածնի աննախընթաց շքեղացումով»:

Հայաստանի նոր պետության հաստատումը պատմական մեծ ու շրջադարձային երևույթ էր մեր ժողովրդի ժամանակակից տարեգրության մեջ:

Անցնող վաթսու տարիների ընթացքում մեր հայրենիքը, հայ աշխատավոր ու տաղանդաշատ ժողովրդի անդուլ և հերոսական ջանքերով, մեր հայրենի կառավարության աշխարհաշեն՝ դեկավարությանը, և եղբայրական օժանդակությամբ ռուս հզոր ժողովրդի, փրկվեց ստույգ կործանումից, վերագտավ իր ազգային, մշակութային, տնտեսական կյանքի լուսավոր ճանապարհը և, շնորհիվ պետական նոր կյանքի, դարձավ ազգային լիիրավ մի հանրապետություն, որտեղ հայ կյանքը, հայ մշակույթը, արվեստն ու գրականությունը, տրևտեսությունն ու գիտությունը զարգանում են համաչափ, անմալխելթաց չափերով և բազմազան ձևերի մեջ:

Վաթսու տարին մեծ ժամանակահատված է պատմության ընթացքի մեջ և ոչ էլ՝ հասարակական կյանքում: Բայց հրաշքի համագոր պատմական նվաճումներ կատարվեցին հայրենի հողի վրա, մեր ժողովրդի արդար քրտինքով, համատ մաքառումներով, ստեղծագործ աշխատանքով, խիզախումներով:

Վաթսուամյա Հայաստանը մեր ժողովրդի դարավոր, հերոսական, ազատագրական պայքարների արգասիքն է, նրա լուսավոր երազանքների, պայծառ հույսերի իրականացումն է, նրա անժամանցելի ազգային իրավունքների միակ պաշտպանն է, և վերջնական փրկարար հանգրվանը, խաղաղ ու ապահով նավահանգիստը, «**Նոր Հայրենիքը Ամենայն Հայոց՝ խաղաղության, ընկերային արդարության և ազգային ազատության շեփորումով**», հայտարարեց Հայոց Հայրապետը, ընդհանուր խանդավառության և սրտագին ծափողջույնների մեջ նոյեմբերի 24-ին Երևանում, ափյուրբահայության ներկայացուցիչների ժողովում արտասանած իր ողջույնի խոսքում:

Սփյուռքի հայությունը ևս անցնող վաթսու տարիների ընթացքում ապրել ու ըստեղծագործել է, խանդավառվել ու երջանկացել հայրենական վերագարթոնքի հալաշունչ ու հայատրոփ վերելքով: Ամեն տարագիր հայ մարդու սրտում միացել է հայրենի տան կարոտը. Սփյուռքի հայության բոլոր իղձերը, սերն ու հավատարմությունը եղել են միշտ հայրենիքի հետ, որպես հայրենասիրական ուժ ու ներշնչում:

Հայ մեծամուն ու հայրենասեր նկարիչ Մարտիրոս Սարյանը սփյուռքի հայությանն

ուղղած իր կոչ-պատգամում հայտարարում էր. «Երամից ետ մնացող կոունկներ, ես ձեզ եմ դիմում, ձեր հետ ուզում եմ խոսել այսօր... Հայրենիքից դուրս ամեն ինչ ձեզ կխոստանան, բայց նրանք ձեզնից կիյեն ամենակարևորը, ազգի հպարտությունը: Ուրիշ բան է հայրենիքը: Առանց հայրենիքի, առանց հայրենիքի կարոտի դուք կկորչեք, կվերջանաք... Պահեք, պահպանեք հայրենիքն ու հայրենին: Միք դառնա երամից ետ մնացող կոունկներ... Ետ մնացողները մեռնում են մեռնության մեջ, սատած գետերի ափին»:

Պայծառ է ու ապահով այսօր մեր ժողովրդի կյանքը իր հայրենի հողի վրա, վառ ու խոստումնալից՝ նրա ապագան:

Հերոսական, դյուցազնական է եղել հայ ժողովրդի անցյալի պատմությունը, լի՝ անհուն ցավերով, բայց և հարատևման անհկուն հաստատականությամբ, կրկին ապրելու, ստեղծագործելու սրտառույ վճռականության սուրբ կիրքով:

Նոյեմբերի հաղթանակով հնչեց հայ ժողովրդի ազատագրության և փրկության ժամը: Մոխիրների, ցավի ու արցունքի ծոցից հարյա՛վ ոգին որք հայոց պատմության: Արյունաքամ հայ հոգու և հայ հողի վրա ծագեց պայծառ առավոտ: Կատարվեց կատարվելիքը:

Այսօր հայ ժողովուրդը դարերի դիմաց ընդմիշտ վառել է իր գոյատևման, իր ազգային-մշակութային վերածննդան անշեջ խարույկը և անկոտրում հավատքով, պայծառ լավատեսությամբ նայում է գալիքի խոստումնալից աչքերին:


Այսօր բոլոր երազներ են ծաղկում մեր սրտերում մեր ազգային փառապանծ տոնի առիթով:

Ծաղկ'իր, ազատ իմ հայրենիք, խաղաղ ու ապահով, ստեղծագործ աշխատանքով, սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Թո՛ղ ընդմիշտ օրհնվի, պահպանվի Նախախնամության Աջով և հայ ժողովրդի բազուկներով «**Արևելյան կողմն աշխարհի, Հայրապետություն և Հանրապետություն Հայոց**»:

«**Սուրբ Էջմիածնից ճառագայթող օրհնությունը և լույսերը Երևանի**», Հայոց Հայրապետի պատկերավոր քաջատրությունը, թող հանդիսանան «ամուր պատվանդանները, հիմքերը մայր երկրում և արտասահմանում բնակվող հայերի ազգային միասնության», որպես «մոլիշ ուժերը հայության հոգու անաղարտ պահպանման»:

Նղիցի՛, եղիցի՛ և՛ եղիցի՛...



ՀԱՅԿԱԿԱՆ ՄՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏԸ (ԵՐԵՎԱՆ)



ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 29-ին լրացավ Հայկական Սովետական Հանրապետության կազմավորման վաթսու տարին:

Այս առթիվ Մայր Աթոռում տեղի ունեցան հոբելյանական հանդիսություններ, որոնց մասնակցեցին նաև սփյուռքի զանազան երկրներից հայրենիք ժամանած եկեղեցական ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետի հրավերով նոյեմբերի 24—30 օրերին, հանդիսություններին մասնակցելու համար, Սփյուռքի թեմերից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին.

1. **Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը**, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ.

2. **Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը**, ԱՄՆ-ի հայոց արևմտյան (Կալիֆոռնիա) թեմի առաջնորդ.

3. **Տ. Տիրացր արքեպ. Մարտիկյանը**, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ.

4. **Տ. Գարեգին արքեպ. Գազանճյանը**, Նոր Զելանդիայի և Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ.

5. **Տ. Ներսես եպս. Պոզապալյանը**, Անգլիայի հայոց հոգևոր առաջնորդ.

6. **Տ. Մեարոպ ծ. վրդ. Գրիգորյանը**, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ.

7. **Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը**, Իրաքի հայոց թեմի առաջնորդ.

8. **Տ. Ոսկան ծ. վրդ. Գաբրիելյանը**, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ.

9. **Տ. Գյուտ եպս. Նազգալյանը**, Փարիզի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ.

10. **Տ. Սարգիս քհն. Սարգիսյանը**, Միլանոյի հաշոց հոգևոր հովիվ:

Հանդիսություններին հրավիրված էին նաև.

11. **Տ. Պսակ արքեպ. Թումայանը**, Լոնդոնից.

12. **Տ. Գնդ եպս. Ճերեճյանը**, Բեյրութից.

Մայր Աթոռից և ներքին թեմերից հոբելյանական հանդիսություններին, դարձյալ Վեհափառ Հայրապետի հրավերով, մասնակցում էին.

13. **Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը**, ատենապետ Գերագույն հոգևոր խորհրդի.

14. **Տ. Հուսիկ արքեպ. Սամբուրյանը**, Մայր տաճարի լուսարարապետ և Բաբվի հայոց թեմի առաջնորդ.

15. **Տ. Նարեկ եպս. Ծաքարյանը**, Ծիրակի թեմի առաջնորդ.

16. **Տ. Գևորգ եպս. Սերադարյանը**, վրահայոց թեմի առաջնորդ.

17. **Տ. Արսեն եպս. Բերբերյանը**, դիվանապետ Մայր Աթոռի.

18. Մայր Աթոռի միաբանությունը, վարդապետ և արքեպ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Նոյեմբերի 24 և 25 օրերին, երկուշաբթի և երեքշաբթի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հայրենիքի հասարակության և սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովը, որին ներկա եղան Մերձավոր և Միջին Արևելքի, Եվրոպայի, Ամերիկաների,

Կանադայի, Ավստրալիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և սփյուռքի այլ հայ համայնքների բազում ներկայացուցիչներ: Նույն ժողովին հրավիրվել էին նաև Ամենայն Հայոց կաթողիկոսը և Մայր Աթոռի և արտասահմանից ժամանած հոգևորականները:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Ս. Սիոն, Ս. Պապ, Ս. Թորգոմ, Ս. Վաչե, Ս. Հուսիկ, Ս. Տիրայր արքեպիսկոպոսները, Ս. Գնել, Ս. Գյուտ, Ս. Արսեն, Ս. Նարեկ, Ս. Ներսես, Ս. Գևորգ եպիսկոպոսները, Ս. Մեսրոպ, Ս. Ոսկան, Ս. Ավագ ծայրագույն վարդապետները, Մայր Աթոռի միաբանության անդամները:

Ժողովին հրավիրվել էին նաև Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ Գրիգոր Խանջյանը, Հովհաննես Թուփուզյանը, Կարայիս Կարապետյանը, Հայկ Մելքոնյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիտյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարզև Ծահրապյանը:

Ստավուտյան ժամը 10.30-ին ակադեմիայի նիստերի դահլիճը լի էր հայրենի հասարակության և սփյուռքահայերի ներկայացուցիչների և այլ հրավիրյալների բազմությամբ:

Հանդիպումը բաց է անում ներկայացուցիչների ժողովի նախապատրաստության կոմիտեի նախագահ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Վիկտոր Հ. Համբարձումյանը, վեր առնելով պատմական նշանակությունը Սովետական Հայաստանի վաթսույն տարիների վիթխարի իրադարձություններին: Անդրադառնալով հայրենիք—սփյուռք հարաբերություններին, մեծանուն գիտնականը ասում է.

«Սովետական Հայաստանը իր ստեղծման առաջին իսկ օրից ուշադրության կենտրոնում է պահել հայ գաղթաշխարհը: Սկսած 20-ական թվականների ներգաղթից և մինչև այսօր նա իր դռները բաց է պահել իր տարագիր զավակների համար, անընդհատ լայնացրել և ամրացրել է հոգևոր, մշակութային կապերը սփյուռքահայության հետ:

Ինձ ուրախություն և քափականություն է պատճառում այն հանգամանքը, որ այդ կապերի մեջ մեծ լուծա են ներդրել Հայաստանի և սփյուռքահայության գիտական աշխատողները: Հայաստանի գիտնականները ստեղծել են քաղաքային ուշագրավ աշխատություններ, որոնցում իրենց արտատույն են գտել հայկական օտարաշխարհի քախտն ու պատմությունը: Մենք մտադիր ենք ավելի ընդլայնել այդ աշխատանքները:

Ես ուրախ եմ հաղորդել, որ այժմ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությանը կից հիմնադրվել է մի նոր կենտրոն՝ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժին, որը կոչված է ավելի խորացնելու սփյուռքահայ աշխարհի գիտական ուսումնասիրության գործը:

Այս առթիվ ես երջանիկ եմ հայտնել, որ Հայաստանի գիտությունների ակադեմիան սահմանել է սփյուռքահայության գիտական աշխատողների համար Անանիա Ծիրակացու անվան մրցանակ: Հավանական է, որ դուք գիտեք, որ Հայաստանի կառավարության կողմից սահմանված են նաև այլ մրցանակներ մշակույթի տարբեր բնագավառների գործիչների համար:

Այս մրցանակների հիմնադրումը հաստատում է մի նոր ձևի մշտական կապ սփյուռքի և հայրենիքի միջև:

Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը ժողովի կազմակերպչական կոմիտեի, հայրենաբնակ հայ ժողովրդի անունից ջերմորեն ողջունում է աշխարհի բազում գաղթօջախներից Հայաստան ժամանած սփյուռքահայության ներկայացուցիչներին:

Այս առթիվ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը հրապարակում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բաբկեն Ե. Սարկիսովի ողջունի խոսքը սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովին, որը բոլոր ներկաների կողմից ընդունվում է ծափահարությամբ:

Հայաստանի Հանրապետության մեծահարգ նախագահի ողջունի խոսքում նշվում էր.

«Թանկագին բարեկամներ, սփյուռքահայ համայնքների և հայրենիքի հասարակայնության հարգելի ներկայացուցիչներ, այս հանդիսավոր օրերին, երբ հայ ժողովուրդը պատրաստվում է մեծ շուքով նշելու իր սոցիալիստական պետականության, ազգային վերածնության և Հայաստանի կոմունիստական կուսակցության 60-ամյակը, անշափ ուրախալի է, որ դուք Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում հավաքվել եք ժողովի՝ քննարկելու վերածնված մայր հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերի հետ առնչվող հարցերը, խաղաղության ու առաջադիմության խնդիրները:

Մեծախորհուրդ է ձեր ժողովը, որ հայրենիքի և սփյուռքի պատմության մեջ առաջինն է: Մեծախորհուրդ, որովհետև նրա մեջ հստակորեն արտացոլվում են այս 60 տարիների ընթացքում հայրենիքի ձեռք բերած վիթխարի նվաճումները, որոնցով նա կարողացավ ոչ միայն հասնել տնտեսա-

կան ու մշակութային անհախճաբան վերելքի, այլև գործադիգ դառնալ բախտի դաժան ճակատագրով աշխարհով մեկ սփռված իր տարագիր գավակներին:

Այս ժողովը, որին դուք հավաքվել եք այսպես սիրով ու պատրաստակամությամբ, միաժամանակ արտացոլումն է այն նվիրական զգացմունքների, այն երախտագիտության, որ սփյուռքահայությունը տաժում է վերածնված հայրենիքի նկատմամբ, նրա մեջ տեսնելով իր գոյատևության առհավատչյալ: Սփյուռքահայության հոծ զանգվածները համոզված են, որ Սովետական Հայաստանն է համայն հայության հայրենիքը, որ այստեղ են անցյալի նվիրական ավանդներով նորոգվում ու իմաստավորվում նրա ներկան ու գալիքը: Սփյուռքահայության հոծ զանգվածները քաջ գիտեն, որ հայ ժողովուրդը իր այս հրաշալի վերածնունդն ապրեց ռուս մեծ ժողովրդի անշահախախտ օգնությամբ, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական դաշինքով, Սովետական Միության վարած խաղաղասիրական հետևողական ու աննկուն քաղաքականությամբ:

Սրտանց ողջունելով ձեր ժողովը, ամենայն հաջողություն եմ մաղթում նրա աշխատանքներին, գանկանում եմ, որ այն անցնի գործարար մթնոլորտում և մեծապես նպաստի մայր հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերի հետագա ամրապնդմանը, խաղաղությանն ու առաջադիմությանը: Ցանկանում եմ, որ Հայրենիքում գտնվելու օրերին դուք ավելի սերտորեն առնչվեք մեր նվիրական հողին, նրա պատմական սրբազան հիշատակներին, նրա նորոգ կյանքի գեղեցիկ երևույթներին և այդ ամենից ոգի առած՝ վերադառնալով շարունակաբար ձեր հայրենասիրական վսեմ գործը:

Հաջողություն ձեզ, թանկագին բարեկամներ:

Ժողովի պաշտոնական բացումից հետո խոսքը տրվում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանին, որը հանդես է գալիս «Վերածնված Հայրենիքը և սփյուռքը. պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» թեմային նվիրված ծավալուն, բովանդակալից և շահեկան զեկուցումով, որի մեջ նշվում է միաժամանակ հայ ժողովրդի փառապանծ ազգային տոհմի առթիվ 60 տարիների ընթացքում և կոմիտեի կազմության օրերից սկսած հայրենիք-սփյուռք հայրենասիրական, մշակութային հարաբերությունների կարևորությունն ու անհրաժեշտությունը, որ հայրենիքը իր վերածննդյան շնչով ու պատգամով, իր նվաճումներով, սխրանքներով դարձել է

սփյուռքի հայրենակարոտ բոլոր հայ սրբուների համար, հարազատի սրտաբացության, ոչ միայն նրանց հույսը, այլև գոյատևման միակ ամուր պատվարը:

Քսան րուպե ընդմիջումից հետո ժողովը շարունակում է իր աշխատանքները:

Սուաջինը հայրենաշունչ ողջույնի խոսքով հանդես է գալիս Ամենայն Հայոց Հայրապետը, որին դահլիճը ողջունում է խանդավառ մթնոլորտում, հոտնկալա, երկարատև ծափահարություններով: Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը հրատարակվել է ամսագրի սույն համարում, էջ 8:

Հանդիսության առաջին օրվա նիստը շարունակվում է մինչև ժամը 14.30: Բազում պատգամավորներ Մայր Հայրենիքից ու սփյուռքից հանդես են գալիս ողջույնի խոսքերով, ճանքերով:

Տեղի է ունենում օրվա հանդիսության խորհրդին, նշանակության շուրջ մտքերի հետաքրքիր փոխանակություն:

Ժողովի երկրորդ նիստը գումարվում է նոյեմբերի 25-ին, ժամը 10—14, իսկ եզրափակիչ նիստը՝ ժամը 18-ին:

Բ և Գ նիստերին նույնպես Վեհափառ Հայրապետը ներկա է լինում հոգևորականների իր շքախմբով:

Նույն օրը, ժամը 16-ին, հանդիսավոր իրադրության մեջ կատարվում է Երևանում, Մոսկվայի և Կնուկյանց փողոցների անկյունում, Վարդան Մամիկոնյանի արձանի մոտ, հարեկամության Տան հիմնադրման արարողությունը:

Հարեկամության Տունը կլինի հայրենիք ժամանող սփյուռքահայերի առաջին հանգրվանը: Հայրենիք-սփյուռք փոխադարձ կապերի պատմության մեջ բառացիկ ու մեծախորհուրդ մի իրադրություն է սա, որը անսահման հրճվանքով է լցնում մեր սրբուների թե՛ հայրենի հողի վրա ապրողներին և թե՛ աշխարհի յորս կողմերում բնակվող մեր հայրենակիցների... Այստեղ, Հայաստանի սրտում, հիմնադրվում է մի Տուն, որը խորհրդանշելու է Մայր Հայրենիքի և ըսփյուռքի միասնությունը:

Շքեղ ու մեծ է լինելու այդ տունը, Երեւանի ճարտարապետական նշանակալի կոթողներից մեկը:

Հայրենիքը տուն է ներտում իր տարագիր գավակների համար: Կա՞ արդյոք դրանից ավելի գեղեցիկ խորհուրդ: Այս տան հիմքերը պիտի գցվեն հայոց դարավոր, մեծ քրտինքով ու արյամբ սրբազործված հողի մեջ, որ երբեք այսքան բարեբեր ու երիտասարդ չի եղել, որքան այժմ: Հայոց հողի վերածնության անցած 60 տարիները երաշխիք են, որ ամուր է լինելու այս տան հիմքը, անասան են լինելու նրա պատերը:

ՀԱՆՐԱՊԵՏԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ 60-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 28-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, տեղի է ունենում պաշտոնական հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայկական Հանրապետության կազմավորման վաթսուհամյակին:

Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճը վերակառուցումից հետո ստացել է շքեղ տեսք:

Այսօր համաժողովրդական տոն է Հայոց հինավուրց հողում, Հայոց լեռնաշխարհում, բերկրալից ու երջանիկ տուն:

Հայ ժողովրդի ազգային մեծ հոբելյանի բերկրանքը հարազատորեն կիսում են մեր հայրենիքի եղբայր ժողովուրդները, բոլոր եղբայրական հանրապետությունները, որոնց բարձրաստիճան ներկայացուցիչները եկել են Երևան՝ միասին ուրախանալու հայ ժողովրդի հետ:

Թատրոնի դահլիճի բեմի խորքում հայ ժողովրդի բարեկամ մեծ Լենինի դիմաքանդակն է: Ծողոողում է ոսկեհոտ «60» թիվը:

Նախագահության սեղանի շուրջ տեղ են գրավել Հայաստանի կառավարության ղեկավարները, միութենական հանրապետությունների, հերոս քաղաք Մոսկվայի և Լենինգրադի ներկայացուցիչ պատգամավորները:

Հանդիսավոր նիստին ներկա է նաև Հայոց Հայրապետը, որին ուղեկցում են Ս. Սիոն, Ս. Թորգոմ արքեպիսկոպոսները ու Ս. Գևել և Ս. Ներսես եպիսկոպոսները և Ս. Ոսկան ծ. վարդապետը:

Հանդիսավոր նիստը բացում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, որը և հանդես է գալիս Հայաստանում սովետական կարգերի հաստատման 60-ամյակին նվիրված ընդարձակ, բովանդակալից մեծ զեկուցումով:

Այնուհետև հայ ժողովրդի փառապանծ տոնը ջերմ խոսքերով շնորհավորում են եղբայրական հանրապետությունների բարձրապատիվ հյուրերը:

Նույն օրը, երեկոյան, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական տոնական մեծ համերգ:

ԶՈՐԱՀԱՆԴԵՍ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԾՔԵՐԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 29-ի առավոտ: Ժամը 10-ին Լենինի անվան հրապարակում, որը զարդարվել է տոնականորեն, և փողփողում են ալ դրոշներն ու «1920» և «1980» տարեթվերը, տեղի է ունենում զորահանդես և աշխատավորների շքերթ:

Հայ ժողովուրդը այդ օրն էլ հանդիսավորապես և ազգային հպարտության քաղցր բերկրանքով նշում է իր հայրենիքի վերածննդի պայծառ տարեդարձը:

Սկսվում է զորահանդեսը, ապա՝ Հայաստանի աշխատավորության շքերթը: Հայն շարասյուններով անցնում են գիտական, մշակութային հիմնարկների, ուսումնական բարձրագույն հաստատությունների կոլեկտիվները, արդյունաբերական ձեռնարկությունների, ներկայացուցիչները:

Հոբելյանական տոնական այս օրերին հայրենաբնակ բովանդակ հայ ժողովուրդը հպարտ է երանությամբ այն ժողովրդի, որ երկար դարերի ստրկությունից հետո նվաճել է իր հողն ու պատիվը, իր ազատությունը, իր խաղաղությունը, և ուրախանում է, հպարտանում՝ իր հայրենիքով, իր նվաճումներով, իր պայծառ ապագայով:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Օգտվելով ստեղծված առիթից նոյեմբերի 29-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհաբանում, Հայոց Հայրապետի հրավերով ու նախագահությամբ, տեղի է ունենում եպիսկոպոսաց խորհրդակցություն, որին մասնակցում են.

1. Ս. Սիոն արքեպ. Մանուկյան.
2. Ս. Պսակ արքեպ. Թումայան.
3. Ս. Թորգոմ արքեպ. Մանուկյան.
4. Ս. Վաչե արքեպ. Հովսեփյան.
5. Ս. Տիրայր արքեպ. Մարտիրոսյան.
6. Ս. Գարեգին արքեպ. Գազանճյան.
7. Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոսյան.
8. Ս. Գևել եպ. Մերեճյան.
9. Ս. Գյուտ եպ. Նազգաշյան.
10. Ս. Ներսես եպ. Պոզապալյան.
11. Ս. Նարեկ եպ. Ծաքարյան.
12. Ս. Գևորգ եպ. Սերադարյան.
13. Ս. Արսեն եպ. Բերբերյան.
14. Ս. Ավագ ծ. վրդ. Ասատուրյան՝ Իրաքի հայոց թեմի առաջնորդի հանգամանքով.
15. Ս. Ոսկան ծ. վրդ. Գլքակյան՝ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդի հանգամանքով:

Խորհրդակցությունը բացվում է Վեհա-



Հայրապետական կոնդակի ընթերցում Մալր տաճարում (նոյեմբեր 80)

փառ Հայրապետի աղոթքով և ժողովականներին ուղղած ողջույնի խոսքով:

Եպիսկոպոսաց խորհրդակցությունը ըզբաղվում է եկեղեցական մի շարք հարցերի քննությամբ, ի մասնավորի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Անթիլիասի Կիլիկյան Աթոռի հարաբերությունների հարցով, վերջերս Անթիլիասից ստացված պաշտոնական նամակի լույսի ներքո:

Եպիսկոպոսաց խորհրդակցությունում քննարկվող հարցերի շուրջ տեղի է ունենում մտքերի լայն փոխանակություն:

Խորհրդակցությունն ավարտվում է ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՀԱՆՐԱՊԵՏԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ,
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ
ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԱՂԹԱՆՔ

Նոյեմբերի 30-ին, կիրակի:

Աշնանային պայծառ ու տաք, արևոտ օր: Մայր Աթոռում տոնական հանդիսություն է:

Մայր տաճարը, մայրավանքի շրջափակը լի է ոխտավորների և հավատացյալների խուռներամ բազմությամբ:

Այսօր Մայր Աթոռում նշվելու է հայկական սովետական Հանրապետության կազմավորման վաթսուամյակը:

Օրվա հանդիսությունն սկսվում է ս. պատարագի մատուցմամբ: Պատարագում է Տ. Արսեն եպս. Բերքերյանը: Մայր տաճարի դասերում տեղ են գրավել ափյուրքի տարբեր երկրներից մայր հայրենիք ժամանած ընդուն ոխտավորներ և Հայաստանի 60-ամյակի հանդիսությունների մասնակից ափյուրքահայության պաշտոնական ներկայացուցիչներ:

Ժամը 12-ին հնչում են ցնծագին ու տրանկան Մայր տաճարի զանգերը:

Հայոց Հայրապետը, ի գլուխ ոխտավորների բազմության, Վեհաբանից ստաջնորդվում է Մայր տաճար, եկեղեցական թափորով և ժողովրդի խանդավառ արտահայտությունների մեջ, ներկա լինելու ս. պատարագին:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում է, ապրումով և ոգևորությամբ, Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ հանրապետության վաստակավոր արտիստ, խմբավար Խորեն Մելիսանջյանի:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Ավանդատնից շարականով, խնկով և զանգերի ուրախ դողանքով Ավագ Սեդան է քերվում Հայոց Հայրապետի հոբելյանական սրբատառ կոնդակը, որը գրվել է այս տարի, մայիսին:

Հայոց Հայրապետի սույն կոնդակը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3:

Պատարագիչ սրբազանը Ավագ Սեդանի քեմից, ի լուր ժողովրդյան, ընթերցում է Հայոց Հայրապետի կոնդակը, որը երկյուղածությամբ և հոտնկայս է ունկնդրվում:

Այնուհետև Նորին Ս. Օծությունը Ավագ Սեդանի ատյանի առաջ, շրջապատված հոգևորականաց դասով, նախագահում է հանրապետական մաղթանքին:


Մայր տաճարի կամարների ներքո հնչում է Հայոց Հայրապետի հուզումնալից դողացող սրբազան աղոթքը, մեր նախնիների.

«Օրհնեսցի, պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Արևելեան կողմն աշխարհի, Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»:

Հանրապետական մաղթանքից հետո ս. պատարագը շարունակվում է: Ներկա ոխտավորներից շատերը ս. հաղորդություն են ստանում:



ՎԵՆԱՐԱՆՈՒՄ



ՀԱՆՐԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՆԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 30-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությունների լուսագարդ դահլիճը լի է հանդիսականներով: Այստեղ ներկա են սփյուռքահայերի ներկայացուցիչները, որոնք Հայաստանի կառավարության հրավերով մասնակցել են Երևանում հոբելյանական հանդիսություններին, ուխտավորները, հայրենի մտավորականության և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ղեկավարությունը և այլ հյուրեր:

Հանդիսավոր միստին ներկա են նաև այս տոնական օրերին Մայր Աթոռ ժամանած արտասահմանյան և ներքին թեմերի առաջնորդները, բարձրաստիճան հոգևորականները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ, շուրջ 400 հոգի:

Հանդիսության պատվո նախագահության նեղակի շուրջ, Հայոց Հայրապետի կողքին, տեղ են գրավել Հայկական ՍՍՀ Միմիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը, Ս. Սիոն, Ս. Պսակ, Ս. Թորգոմ, Ս. Վաչե, Ս. Տիրայր, Ս. Գարեգին արքեպիսկոպոսները:

Հանդիսության բացումը կատարվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով և Հայոց Հայրապետի աղոթքով:

Այնուհետև Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպ. Մանուկյանը հանդես է գալիս բացման հետևյալ ճառով:

**Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍԲԸ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՕ-ԱՄՅԱԿԻ
ՀԱՆՐԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ**

Վեհափառ Տեր.

Սովետական Հայաստանի ԹՕ-ամյակը հայ ազգի վերածննդի փառավոր տոնն է, հայ ժողովրդի վերակենդանի տոնը, հայոց աշխարհի պետականության, մոր կարգերի և կառավարության հաստատման տարեդարձը:

Սարդարապատի բախտորոշ ճակատամարտին՝ հայ ժողովրդի դյուցազնական հաղթանակը թուրք բանակի դեմ՝ փրկեց Հայաստանը կործանումից և հայությունը բնաջնջումից: Այն դարձավ Հայրենիքի փրկության Մեծ հաղթանակը. այլապես՝ հայ ժողովուրդը պիտի նահատակվեր, ու հայոց աշխարհը ավերակ պիտի դառնար:

Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ և խորհրդային կարգերի հաստատմամբ՝ Հայաս-

տանը դարձավ Սովետական Միության 15 հանրապետություններից մեկը:

Այնպիսով 60 տարիների ընթացքում հրաշք կատարվեցավ հայության կյանքին մեջ: Պատմական մեծ Հայաստանի արևելյան այս փոքր հատվածի վրա վերաշինվեցավ

և հայ ժողովուրդը ներսեց մեր մշակույթի նոր Ոսկեդարը:

Գրականության, գիտության և գեղարվեստի մարզերում մեջ հայ ժողովուրդը ծրնունդ տվավ հանճարեղ ու տաղանդավոր բազմաթիվ զավակներ, որոնք համաշխար-



Հորեյանական հանդիսությունից մի պահ (Վեհարան, հանդիսության դահլիճ, 1980 թ. .նոյեմբերի 30)

հայոց աշխարհը՝ հայկական ճարտարապետական հրաշալի կոթողներով և մշակույթի, գիտության ու արվեստի հուշակապ կառուցումներով: Արարատյան աշխարհը վերածաղկեցավ, հայոց լեռները կանաչազարդվեցան, և հայրենի հողի վրա բնակվող հայությունը բազմացավ, աճեցավ և ավելի քան քառապատկվեցավ:

Մեր պատմության մեջ՝ ոչ մեկ ժամանակ Հայաստանի մաշրաքաղաքը չէ ունեցած մեկ միլիոնեն ավելի բնակչություն, ինչպես այսօր Երևանը, որ հայկական ճարտարապետական գեղեցիկ ու հանգուցական քաղաք է աշխարհի մեջ:

Հայությունը այլևս անտեր ու անտիրական մը ազգ չէ, այլ ազգային պետականություն և կառավարություն ունեցող ժողովուրդ է:

Հայաստանի պետության հովանավորությամբ հայ մշակույթը ծաղկեց ու զարգացավ հայրենի հողի վրա, հայ գիրն ու գրականությունը իրենց բարձրակետին հասան,


հային հոշակ վկայելեն ու պատիվ կրեն հայությանն ու ողջ մարդկությանը:

Թեև հայության գրեթե կեսը դեռևս կապի ի սփյուռս աշխարհի, սակայն ժողովուրդ մը չի կարող ազգ կոչվիլ և ապրիլ առանց հայրենիքի, առանց ունենալու իր սեփական հողը: Ժողովուրդը կապի իր հայրենիքով, ինչպես ծառը կապի իր արմատներով՝ սնունդ ու ավիշ ստանալով հողեն, այնպես ալ ազգը՝ իր արմատներեն, իր նախնիներեն կատանա հոգեկան ու իմացական սրնունդը:

Արտասահմանի հայության գոյատևումը սերտորեն կապված է հայրենիքի հետ: Միշտ էլ իր հոգևոր ու ազգային-մշակութային սնունդը կատանա հայրենիքեն:

Միշտ էլ հայ զաղութները հայկական ծառի ճյուղերն են և եթե կտրվին իրենց արմատներեն, այսինքն՝ հայրենիքեն, կչորանան ու կոչնչանան:

Ս. Էջմիածինը, Հայաստանայց Եկեղեցու Մայր Աթոռը, որ եղել է հայ ժողովրդի



ՀԱՅԳԱՍՏԱՆԻ ՄԱՀ ՄԻՆԻՍՏԵՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՍՏԸ (ԵՐԵՎԱՆ)

հոգևոր լույսի ու մշակույթի առաջին օր-
րանն ու վառարանը, ինչպես նաև ոսկեղեն
օղակը հայրենիքի և սփյուռքի միջև, այսօր
ալ կկատարեն իր պատմական հոգևոր
դերը՝ լույս սփռելով սփյուռքի հայության
վրա:

Մայր Աթոռը՝ շնորհիվ Ամենայն Հայոց
հայրենասեր Հայրապետի, իր պատվավոր
բաժինը բերած է հայրենիքի վերաշինու-
թյան գործին՝ վերանորոգելով ու կառուցե-
լով հայ հոգևոր մշակույթի օջախները՝ Հա-
յաստանի վանքերն ու եկեղեցիները, վայե-
լելով հայրենի պետության բարյացակամ
հովանավորությունն ու օժանդակությունը:

Հայաստանի և հայ ժողովրդի ապագան
լուսավոր է ու պայծառ: Խաղաղության մեջ
Հայաստանը պիտի առաջադիմե ընդմիշտ:
Ա. Էջմիածնի նվիրական կամարներուն
ներքո Վեհափառ Հայրապետի նախագա-
հությամբ՝ Սուվետական Հայաստանի 80-
ամյակին նվիրված այս հանդիսությունը
կհայտարարենք բացված:

Ապա հանդիսության ղեկավար Տ. Արսեն
եպս. հերբերյանը ընթացք է տալիս հոբել-
յանական միստի ծրագրի կատարմանը:

Հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատ-
մության դասախոս դոկտ., պրոֆ. Սիմոն
Կրկյաշարյանը հանդես է գալիս Հայաս-
տանի վաթսուամյակին նվիրված զեկույ-
ցով:

ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՎ

Այս օրերին համայն հայ ժողովուրդը,
մայր հայրենիքում, թե ի սփյուռս աշխար-
հի, նշում է իր փառապանծ հոբելյաններից
մեկը՝ Հայաստանում սուվետական իշխա-
նության 80 տարին:

Հայաստանում սուվետական կարգերի
հաստատումը նոր դարագլուխ բացեց հայ
ժողովրդի կյանքում:

Երկար ու տառապալից է եղել հայ ժո-
ղովրդի անցած ուղին, մինչև իր իսկական
երջանկության հանգրվանը հասնելը:

Հայաստանի բազմադարյան պատմու-
թյունը լի է ստեղծագործության, հերոսա-
կան պայքարի հաղթանակների, բայց և
ժողովրդի կրած անհամար արհավիրքների
և օտարերկրյա արշավանքների մոռյլ էջե-
րով:

Եվ ամեն անգամ, երբ հայրենի երկիրը
ձերբազատվում էր նվաճողների հորդանե-
րից, շինարար հայ ժողովուրդը, զենքը ման-
գաղի վերափոխելով, շարունակում էր ըս-
տեղծել, վերականգնում էր թշնամու ավե-

րածը և կառուցում բարձր մշակույթի նոր օ-
ջախներ:

Մանավանդ ժե դարի վերջից և ժՋ դա-
րի սկզբից Հայաստանը դառնում է սույթա-
նական Թուրքիայի և շահական Պարսկաս-
տանի միջև մղվող ամաչացուցիչ պատե-
րազմների թատերաբեմ: Այնուհետև երկու
գիշատիչ բռնակալ տերությունները մեր
սրբազան երկիրը բաժանեցին իրար միջև:
Այդ ժամանակից սկսում է Հայաստանի
պատմության ամենամոռյալ և ողբերգական,
ամենատառապալից և դաժան հալածանք-
ների շրջանը:

Բազմաչարչար հայ ժողովուրդը, նրա ա-
զատագրական շարժման առաջավոր գոր-
ծիչները, սակայն, ժՋ դարից սկսած հաս-
տատապես համոզվեցին, որ միայն Ռու-
սաստանի, ուստի մեծ ժողովրդի օգնությամբ
հնարավոր էր Հայաստանն ազատագրել օ-
տարի ատելի ստրկության լծից:

1801 թվականից սկսում է Անդրկովկասի
ժողովուրդների ազատագրումը թուրքա-
կան և պարսկական լծից: 1827 թ. սկսվեց
ռուս-պարսկական պատերազմը, որի ան-
միջական արդյունքը եղավ Արևելյան Հա-
յաստանի ազատագրումը պարսկական
լծից: Նույն թվականի հոկտեմբերի 1-ի
պատմական օրը ռուսական զորքերը մտան
Երևան, իսկ հաջորդ տարվա սկզբին կոնք-
ված Թուրքմենչայի պայմանագիրը վավե-
րացրեց Արևելյան Հայաստանի միացումը
Ռուսաստանին:

Օտար բռնապետության լծի թթափումը
մեծ ուրախություն և ցնծություն պատճա-
ռեց համայն հայ ժողովրդին: Հայ ժողովրդի
ցնծալից տրամադրությունը լավագույնս
արտահայտել է հայոց վերքի մեծ երգիչը,
դեպքերի ակամատես ու վկա Խաչատուր
Աբովյանը, խնդությամբ բացականչելով.

«Օրհնվի էն սհաթը, որ ուսի օրհնած ոտը
հայոց լիս աշխարհը մտավ, ու դզբաշի ա-
նիծած չար շունչը մեր երկրիցը հաղածեց»
Երևանի գրավման առթիվ Աբովյանը դարձ-
յալ գրում է. «Դժոխքի քանդվիլը մեղավոր-
ների համար էն գինը չէր ունենալ, ինչպես
Երևանու բերդի առնիլը հայերի համար»:

Արևելյան Հայաստանի միացումը Ռու-
սաստանին ունեցավ այն ակնհայտ նշա-
նակությունը, որ հայ ժողովրդի մի գզալի
մասը փրկվեց ֆիզիկական ոչնչացման
մշտական սպառնալիքից և ստացավ խա-
ղաղ աշխատելու և իր հավատքը դա-
վանելու իրավունք: Այդ բանում հայերս ա-
ռավել համոզվեցինք 1915 թ., երբ մեր ժողո-
վրդի արևմտյան հատվածը ապրեց իր
պատմության ամենամոռյալ ողբերգությունը՝
ապրիլյան Մեծ եղեռնը:

1917 թ. Ռուսաստանում տապալվեց ցա-

րական միապետությունը: Հաղթանակեց Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը:

Օգտվելով մեր ժողովրդի համար ստեղծված քարոզ իրադրությունից, թուրքական զորքերը մեկ անգամ ևս ներխուժեցին Արևելյան Հայաստան, արյան ճապաղիքի մեջ խեղդելու Արարատի փեշերին ծվարած հայ ժողովրդի վերջին մնացորդները:

Սակայն հայ ժողովուրդը, օրհասական այդ օրերին, մեկ մարդու նման ոտքի կանգնեց, ծառս եղավ սպառնացող արհավիրքի դեմ. և 1918 թ. Մարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի ահեղ ճակատամարտերում կատարեց անհնարինը, գրեց իր նոր Ավարայրը, հավաստելով ի լուր աշխարհի գոյատևելու իր հաստատվածականությունը: Մարտիրոսների արյամբ գրված այս եղյամարտը ի չիք դարձրեց հայ հիմնավոր ժողովրդին ի սպառ ոչընչացնելու նպատակով երիտթուրքերի մըշակած հրեշավոր ծրագրերը:

1920 թ. նոյեմբերի 29-ին բացվում է լուսավոր առավոտը. Հայաստանում հաստատվում են սովետական կարգեր:

Սովետական իշխանությունը բազմաչարչար հայ ժողովրդին բերեց իսկական հասարակական և ազգային ազատություն, խաղաղ աշխատանքի խնդություն՝ սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Հասարակական ու քաղաքական նոր պայմաններում աշխատանքի հայ ժողովուրդն աննախընթաց ոգևորությամբ սկսեց բուծել իր դարավոր վերքերը. և այդ կատարեց այնպիսի թափով, որ հազիվ երկու տասնամյակ անց, երբ սկսվեց սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը, հայ ժողովուրդը ևս, սովետական եղբայր ժողովուրդների նման, կարողացավ անմնացորդ կատարել իր պարտքը հայրենիքի և համայն մարդկության առաջ:

Նույնպես ձգտելով օգնել իրենց մայր հայրենիքին, հայրենասեր սիյուրքահայերը նյութական միջոցներ հանգանակեցին, որոնցով կազմավորվեցին «Սասունցի Դավիթ» և «Ջորավար Բադրամյան» տանկային շարայունները: Այս նվիրական գործում մեծ է եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և կաթողիկոսական տեղակալ, երջանկահիշատակ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի դերը:

Պատերազմը թեև չափազանց ծանր նրստեց մեր ժողովրդի վրա, որը նոր էր սկսել կերտել իր նոր կյանքը, բայց նրա աննկուն կամքը հաղթահարեց բոլոր դժվարությունները և կարճ ժամանակում բուծեց իր վերքերը, վերականգնեց երկրի տնտեսությունը և իր վայթունամյա փառապանծ հորեղանը

դիմավորում է առավել քան երբևէ առնականացած:

Հայաստանի անօրինակ վերելքը վկայող քազմաթիվ և քազմապիսի փաստերից մատնանշենք միայն մեկը՝ քաղաքամայր Երևանը, որը 80 տարի առաջ եղել է շուրջ 25 հազար բնակչություն ունեցող գավառական մի գյուղաքաղաք, այսօր դարձել է ավելի քան մեկ միլիոն բնակչություն ունեցող ժամանակակից խոշոր և բարեկարգ արդյունաբերական քաղաք:

Հայաստանի տնտեսական ու հասարակական վերելքով պայմանավորվեց նաև հայ ժողովրդի մշակույթի բուռն ծաղկումը բոլոր ոլորտներում:

Հիրավի աննախընթաց բարձունքի հասն հայ գրականությունն ու արվեստները: Այժմ Հայաստանում դժվար թե գտնվի իր ընտանեկան գրադարանը չունեցող որևէ մի տուն:

Մեր ժողովրդի՝ պայքարով, մաքառումներով և քրտնաթոր աշխատանքով բնութագրվող պատմական այս 80-ամյա ժամանակաշրջանում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը անմնացորդ բաժանել է իր հավատարիմ հոտի բախտը, ինչպիսին էլ որ այն եղել է: Եվ դա միանգամայն բնական է:

Հայ ժողովրդի հազարամյա ամբողջ պատմության ընթացքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ էլ անբաժան է եղել իր ժողովրդից և ամենագործուն մասնակցությունն է ունեցել նրա բոլոր վայրիվերումներին:

Երբ մեր ժողովուրդը 1920 թ. նոյեմբերի 29-ին իր կյանքն ու սպազան, իր պատմական բախտը կապում էր Հայաստանում սովետական իշխանության հաստատման հետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը չէր կարող անտարբեր դիտողի դերում մնալ պատմական մեծ տեղաշարժերի հանդեպ, երբ փյունիկ թռչունի նման վերածնվող մեր երկիրը և ժողովուրդը անցնում էին հասարակական, քաղաքական, տնտեսական և ընկերային վերափոխումների թուփից:

Մայր Աթոռը բախտորոշ այդ իրադարձությունների սկզբից նեթ՝ որպես հայրենասիրության ճշմարիտ օջախ, մնում էր իր հարազատ ժողովրդի հետ, նրա հերոսական ու դժվարին պայքարում:

Վերջին տասնամյակներին Նոր Հայաստանի արևի տակ իր վերածնունդն ապրեց մեր Մայր Եկեղեցին, հոգևոր զարթոնքով, տասնյակ պատմական հուշարձան-վանքերի ու եկեղեցիների վերանորոգումով, Ս. Էջմիածնի աննախընթաց շքեղացումով, հաստատում է Վեհափառ Հայրապետի իր գրած հորեղանական հայրենաշունչ կոնդակում:

Այս տարիների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ոչ միայն բարեկարգվեց, շենացավ, պայծառացավ ու գեղեցկացավ արտաքնապես իր հոյակերտ կառույցներով, այլև ներքնապես բարեփոխվեց, ամրապնդվեց և դարձավ մեր ժամանակների արժանի եկեղեցական, հայրենասիրական, մշակութային հզոր ազդակ ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային, միջեկեղեցական կյանքում:

1955 թ. հոկտեմբերին, համազգային ընտրությամբ, Լուսավորչի Աթոռի վրա բարձրանում է Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետը, որը իր անկաշառ հայրենասիրությամբ մինչև օրս էլ շարունակում է Մայր Աթոռի՝ դարավոր ավանդություն դարձած եկեղեցաշեն, մշակութային, հայրենասիրական գործունեությունը, առավել լայն չափերով և առավել մեծ արդյունավետությամբ:

1955 թ. հոկտեմբերի 6-ին, Հայոց Հայրապետի գահակալության առթիվ կազմակերպված ընդունելության ժամանակ, նա ասաց.

«Ավերներով ու տառապանքներով լեցուն մեր պատմության զգացումը մեր հոգիներում մեջ, մեր անթիվ-անհամար նահատակներու այրող կսկիծը մեր սրտերում մեջ, մեր ազգային վերածնունդի և Հայրենիքի վերաշինության ցնծության ապրումը մեր կյանքներում տակ, մեր արդար ու սուրբ իղձերու իրականացման հավատքով գոտեպնդված, մեր հայացքը դարձնենք մեր ժողովուրդին և նահատակ մեծ բանաստեղծին խոսքերով ուխտենք՝ Հայ ժողովուրդ, «Մենք զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք մեր արշալույս»:

1957 թ. ապրիլի 21-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում խոսած իր քարոզում Վեհափառը այսպես պատգամեց.

«...Մեր օրերում, ամեն գարուն և ամեն հարության ավետիս իրենց հետ կրերեն մեզ՝ նաև մեծ ավետիսը մեր ժողովրդի կենդանության, մեր ժողովրդի կյանքի մեր ընդլուծումներում, մեծ ավետիսը մեր վերածնված Մայր Հայրենիքի մորամոր ավանդներում և հայդանակներում՝ տնտեսության մեջ, գիտության մեջ, կրթության մեջ, արվեստներում մեջ:

Այստեղ, Մայր հողի վրա, վերջապես, հայը կշինե, կստեղծե իրեն համար, կշինե իր ներկայի ու ոսկի ապագայի համար: Այստեղ ոչինչ կկորսվի, ոչինչ կկախվի: Ամեն ինչ կմեկտեղվի, ամեն ինչ կկուտակվի, ամեն ինչ կաճի: Եվ ինչ որ այստեղ կշինվի, այդ կմնա մեզի միայն:

Հայ մարդ, մանավանդ դու, պանդուխտ հայ մարդ, և դու հայ երիտասարդ, ուր որ ալ գտնվիս, դարձուր դեմքդ դեպի քու պա-

պերտդ հազարամյա երկիրը. դրախտավայր, որ այսօր հարություն առած՝ արև կիմե: Այսօր հայոց պատմության մոր գարունն է ծաղկած ու քեզ կկանչե: Մի վհատիր, մի տկարանար, մի երկմտիր, մի թափառիր անհույս ճանապարհներու վրա: Մի բախեր անհարազատ դոներ, որոնք երբեք պիտի չըբացվին քու առաջ: Ամեն հույս այստեղ է, և միայն այստեղ: Արդ, սիրտ առ, արիացիր և ուխտե մնալ հարազատ զավակը հայ ժողովրդի լուսաշող հավատքին ու Հայրենի հողին, և արթուն պահակը Ազգիդ սուրբ ավանդներում և արդար տենչերում»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ազգանվեր գործունեության մեջ մշտապես հույժ կարևոր տեղ է գրավել Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայության, ինչպես նաև սփյուռքի տարբեր հատվածների միջև ազգային, կրոնական, մշակութային կապերի ամրապնդման հարցը: Այս առումով մեծ դեր են կատարում մշտական փոխադարձ այցելությունները, քայց առավել մեծ նշանակություն ունեն Ս. Տ. Վազգեն Ա. Հայրապետի հովվական այցելությունները սփյուռքի հայաշատ գաղթօջախները: Այդ այցելություններն ամեն անգամ ոգևորության մոր աղբյուր են դառնում սփյուռքի մեր եղբայրների համար, ամրապնդում են նրանց միջև փոխադարձ կապը, ամրացնում հավատը հայրենի երկրի և եկեղեցու հանդեպ, խորացնում սերը դեպի հարազատ ժողովուրդը:

Մայր Աթոռի հետպատերազմյան տարիների գործունեության բնութագիրը մեծապես թերի կմնար, եթե չնշեինք Վեհափառ Հայրապետի ամենագործուն մասնակցությունը աշխարհում կայուն խաղաղության հաստատելու համար առաջավոր մարդկության մղած ընդհանուր պայքարին: Այս տարիների ընթացքում չի եղել խաղաղության պահպանման հարցերին մվիրված համաշխարհային թե միութենական չափամիջով հիշատակության արժանի որևէ համաժողով, որին իր գործուն և հույժ օգտակար մասնակցությունը քերած չլինի Մայր Աթոռը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ: Եվ մեր Եկեղեցին այսօր, իրավամբ, կարող է պարծենալ, որ նման գործունեությունը բարձր է գնահատվել սովետական կառավարության կողմից, և Հայ Եկեղեցու հովվապետը, Ամենայն Հայոց Վեհափառ և Սրբազնագույն կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ը պարգևատրվել է «Պատվո նշան» և «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով:

Երկար, օրհնաբեր կյանք Վեհափառ Հայրապետին.

Փառք 60-ամյա Սովետական Հայաստանին:

Փառք հիմնավորց և մշտանորոգ հայ ժողովրդին, որն իր անխնայ աշխատանքով, սովետական եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում, ալեհեր Մասիսի փեշերի տակ, կերտում է իր պայծառ, անամպ ապագան:

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Ս. Թորգոմ արքեպ. Մանուկյանը առաջինը հանդես է գալիս հոբելյանին նվիրված ողջույնի հետևյալ խոսքով:

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Հայրապետ,

Այս օրերուն, հայ ժողովուրդը ուրախության, շնորհակալության իր զգացումները կարտահայտե անդրադառնալով իր պատմության 60 տարիներուն, ուր կոտանե իր գոյության և հարատևության երաշխիքը՝ վերածաղկալ հայրենիքի մը իրականության դիմաց, թե՛ քաղաքական-պետականության և թե՛ մշակութային ծաղկումի իմաստով:

Հայ հայրենիք: Հայ մարդու հայրենիքը: Եվ հայրենիքը հող է և հոգի:

Հողը՝ հիմն է, արմատն է:

Հոգին՝ շունչն է, հավատքը, աճելու սահմանված կյանքը, սլացքը, ստեղծագործությունը, անմահությունը:

Մեր իրավ ու պատմական տունեն՝ հայրենիքեն, աշխարհի հզորները փոքրիկ հող մը միայն տվեր են մեզ: Մեր աճող ու տարածվող արմատներուն համար անբավարար: Արմատներ՝ որոնք առհավական ձգողական ուժե մը քաշված, ափնքնված, պիտի դաշին Մասյաց սարերու ընդերքին ու արմատներուն:

Սակայն, անգամ այս փոքր հողին վրա ապահոգ ու ապահով 60 տարիներու կարճ շրջան մը, բաղդատմամբ ավելի քան 3000-ամյա մեր պատմության, ապացույցը տվավ թե մենք հոգի ժողովուրդ ենք: Փոքր բայց ստեղծագործ, փոքրաթիվ՝ բայց «բազում գործք արության» արդեն իսկ արձագրած գիտության, արվեստի, դաստիարակության, ճարտարարվեստի, կառուցումի և հոգևոր ու մշակութային անդաստաններուն մեջ:

Հայաստանյայց Եկեղեցին, Հայոց Եկեղեցին, Էջմիածնով հոգեդինացած, հարագատն է այս հույն մայր հողին և միևնույն ժողովրդին:

Հայրենիքի հողի մեջ իր արմատը, իր հիմքերը անշարժ և անասանելի գործությանը խարսխած Էջմիածինը, ամենայն

հայոց մայրն է անխաղախ, իր հոգևոր հովանին տարածելով աշխարհացրիվ իր զավակներուն՝ կարտով լեցուն և պանդուխտ հոգիներուն ալ վրան:

Ահա թե ինչո՞ւ հայոց պատմության դարերու հոլովության այս հետին՝ բայց ոչ վերջին, ապահոգ ու ապահով շրջանի ուրախությունը՝ վերածաղկալ Մայր Հայաստանի հայկական պետականությունը՝ Սովետական Միության մեջ ճանչված իբրև լիիրավ պետություն, ափիջը կուտա Հայաստանյայց Եկեղեցիին, արդարորեն նշելու յուրահատուկ ծառայությունը, և իր իսկ հոգևոր մշակույթի իրագործումները, միշտ հավատարիմ իր հայրերու հավատքին:


Երեքհազարամյա մեր պատմության մեջ, Հայ պետության պարտքն է եղած ապահովել, հովանավորել և պաշտպանել մեր ժողովրդի մայր հողը, անոր գոյությունը և անոր ստեղծագործ հոգիի հոգևոր մշակույթը:

Իսկ մեր պատմության վերջին երկու հազար տարիներու շրջանին, Հայոց Եկեղեցին պաշտոնն է եղած՝ կրոնական իր հավատքի գործությամբ ու ներշնչումներով, ամեն ու անմահաց պահել հայ ստեղծագործ հոգին՝ Աստուծոմե շնորհ տրված «հայու սուրբ հոգին»:

Եվ հայ ժողովրդի Եկեղեցին, դարեդար, հավատարիմ է մնացել իր կոչումին, թե՛ մեր Հայ պետականություն ունեցած շրջաններուն և թե՛ երբ զրկված ենք մնացել այդ բարիքեն:

Այս օրերուն, երբ հայերը՝ մայր հողի վրա և կամ տարակա սփյուռքի ցրվածության մեջ, կհրճվին Հայ Պետության գոյության և անոր հոգեշահ իրագործումներուն երաշխիքին պատճառով, չենք կարող չհրճվիլ՝ հիշելով որ Հայոց Եկեղեցին ևս մեր ժողովրդի ահավոր սպանդի և անկարագրելի կործանման և ավերածի փորձառությունն են հետո, սփյուռքի տարածքի վրա և Հայ Սովետական Պետության դրույթի մեջ, հավատարիմ է մնացած իր կոչմանը, հարության հոգեհորոգ շարականներու հաղթերգությամբ և բանաստեղծ իր զավակներուն ոգեկոչումով հաստատապես պատգամելով. «Յարութեան շունչն է ահա՛ ջարդակոտոր ազգըդ իմ» (Վահան Թեքեյան):

Մինչ անմիտ թշնամին հիմարորեն կծրագրեր և կհայտարարեր՝ «միայն մեկ հայ ողջ թողնել, այն ալ թանգարանի համար», վերջին 60 տարիները բավական եղան ապացուցելու որ խաղաղություն սիրող հայը, համամարդկային եղբայրության հավատացող հայը, մարդկային արժանապատվության անխաճախնդիր և զայն բոլորին ցանկացող հայը, կարող է պետականություն



Ս. ՄԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ (ԵՐԵՎԱՆ, 1976 թ.)

ունենալ, (աստղերու լեզուն խոսիլ), քարը մետաքսի փոխակերպել և բաց ճակատով քայլել քաղաքակիրթ ժողովուրդներու շքերթի մեջ:

Վերջին 80 տարիները բավական եղան ապացուցելու որ Հայ եկեղեցին ևս, սփյուռքի մեջ և հայրենի հողի վրա, հակառակ պատերազմի, շարունակեց մնալ «Լուսավորչի հավատքի անմար կանթեղը» և Էջմիածինը՝ միամաժամ ամպերու թանձրության ընդմեջեն, սկսավ շողալ իբրև «սին լուսոյ» և «ամպ լուսաւոր» տարաշխարհի անդաստաններու վրա ծվարած մեր ժողովուրդը իրար քերելով և հուսադրելով որ կազմակերպի իբրև կրօնական համայնք, իբրև մշակույթի և հոգիի ժողովուրդ:

Այսօր, արտասահմանի մեր ժողովուրդը ևս աճած է թվով և հանճարեղ իր զավակներու աստղահույլով՝ կյանքի բոլոր ասպարեզներուն մեջ:

Արտասահմանի հավատարիմ և հայ հոգևոր զավակներուն համար, Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետը, գորա-

զուխն է հայ հոգևոր բանակի, խորհրդանշելով մեր պատմության կանչը, հայրենի հողին ձայնը և մեր ժողովրդի շինարար հոգիին պայծառակերպումը:

Ահա թե ինչո՞ւ արտասահմանի հայությունը, մեկ կողմէ իր աչքը հառած է Արարատի կատարին՝ իր գոյության դրոշին հաստահիմն խորհրդանշող Մասիս սարին, և Մայր Հայաստանի ամբողջությունը և ապահովությունը երաշխավորող հայրենի պետության, և մյուս կողմէ իր տարագիր հոգին շղթայած է Ս. Էջմիածնի կաթողիկեին ու խաչին, անբաժանելի այս երկվորյակին:

Եվ իր աղոթքը այն է, որ երկնապարզ աստվածությունը տևական լինի, իր Հայաստան աշխարհի՝ «Հայրապետութեան և Հանրապետութեան» հայու հայրենի հողին ու հոգիին բարօրության և անասանության համար:

Նույն հոգիին բխումն է այս քերթվածը, տարագիր հայու աչքերով՝ Էջմիածնի խորհուրդը բացահայտող.

ԴՈՒՆ ՄԵՐ ՀՐԱԾԻՆ

Միայն անուրդ—Հրաշք—բա է պանդուխտ իմ հոգիս

Կործանում է և անլուր իր նահանջէն կորզելու.

Էջմիածին, դուն կանգուն...: Թող միշտ հպարտ՝ կոթողուիս իմ պապերէն իբրև ձայն, ու մայր հողէն այցելու:

Ի՞նչ փոյթ ըլլաս ալևոր, ի՞նչ փոյթ՝ բեկուած յո՞րդ բաժակ.

Ըստուերներուդ, գիտնաս դուն, ըսփոփանքին ինչ կարօտն

Ունիմ խորունկ: Կ'ապրիս դուն, Էջմիածին, ու բուժակն

Ես դուն հիւանդ սրտերուն, անյոյսներուն թափառտուն:

Ու կը տեսնե՛մ, կը տեսնե՛մ... պայծառանաս պիտի դուն,

Դառնաս խարխալ ամրութեան, ու հարաւէր դէպի տուն...:

Տես, կը քալեն, կը քալեն, կարաւաններ անո՛ր, ցնծուն,

Փոխակերպած անապատն ու հին ըսպանդն զագրանուն...:

Բա է անո՛ւնդ միայն: Է՛ջմիածին, կ'ապրի՛ս դուն, ...

Ու քեզի հետ՝ կ'ապրիմ ես, հազար-հազար սրտերուն

Համազարկին տալով ձայն: Ծաղկազարդուէ՛ր դուն կանգուն,

Դուն՝ մեր հրաշք, մեր կտակ, մեր գալիքին երգ զանգուն...:

Այնուհետև ողջույնի խոսքեր են ասում Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրն. Հայկ Մելքոնյանը, լիբանանահայ հասարակական գործիչ և բանաստեղծ պրն. Վահե Վահյանը, հեղուրթի «Արարատ» թերթի խմբագիր պրն. Ժիրայր Նաիրին:

Ողջույնի խոսքերի ավարտին Ս. Արսեն սրբազանը ընթերցում է Հայոց Հայրապետի շնորհավորական հեռագիրը՝ ողղված ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նա-

խագահ Բաբկեն Սարկիսովին և ՀՍՍՀ Միահյատների խորհրդի նախագահ Ֆադեյ Մարգարյանին: Շնորհավորական սույն հեռագրերը տպագրվել են «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 9, 10):

Այնուհետև Ս. Արսեն եպիսկոպոսը ընթերցում է նաև Երուսաղեմի ամենապատիվ Ս. Եղիշե սրբազան պատրիարքի շնորհավորական հետևյալ հեռագիրը, Հայաստանի 60-ամյակի առթիվ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ
S. S. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրով և խանդավառությամբ պատրաստվում էինք տոնելու Հայաստանի 60-րդ տարեդարձը, բայց ֆիզիկական պայմանները չթույլատրեցին:

Հայտնում ենք մեր հիացումը մեր երկրի 60 տարվա հերոսական գործերի և մեր ժողովրդի վերածնունդի համար, խաղաղության և բարգավաճման մեջ: Հաճեցեք փոխանցել մեր հայրենի կառավարության մեր շնորհավորանքը և հարգանքը:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

24 նոյեմբեր 1980 թ.

Այնուհետև Հայոց Հայրապետը հրավիրվում է Հայաստանի վաթսուամյակի առթիվ տալու իր պատգամն ու օրհնությունը: Դա՛նի՛նք հոտնկայս և խանդավառ մթնոլորտում ողջունում է Հայոց Հայրապետին և երախտագիտությամբ լսում Նրա պատգամը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄՆ ՈՒ
ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻՆ

(30 նոյեմբերի 1980 թ.)

Այսօր Մեզ համար խոր մխիթարություն է ողջունել ձեզ բոլորիդ այս հարկի տակ, մեր հայրենական մեծ տոնի առիթով՝ Հայաստանի 60-ամյակի սեմին:

Այսօր և նման տոնակատարությանց առիթով, երբ մի պահ հիշում ենք հին Հայաստանը, ավերակների Հայաստանը, և ողջունում ենք հայրենի ներկա վերածնունդը, Մեր գիտակցության առջև հառնում են հատկապես երեք վեպեր, որոնք Մեր վրա բացառիկ ազդեցություն են թողած:

Առաջինը՝ Ֆրանց Վերֆելի վեպն է, հայտնի «Մուսա լեռան քառասուն օրերը», երկրորդը՝ Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը, և երրորդը՝ Մարիետա Ծաֆինյանի «Հիդրոցենտրալ» վեպը: Երեք վեպերն էլ մեր ժողովրդի ողբերգական ճակատագրի և վերածնունդի սկզբնավորության հետ կապված են: Եվ տարօրինակ զուգադիպությամբ մը, երեք վեպերի գլխավոր հերոսները ակնուբախյալ են: Ես միայն կանգ կառնեմ երրորդի՝ Մարիետա Ծաֆինյանի վեպի վրա:

Այս առիթով հայտնում եմ իմ հիացումը տաղանդաշատ հեղինակի նկատմամբ և մխիթարությունը, որ նա տակավին 94 տարեկանում ապրում է, մտածում է և գրում եռանդով լի:

Գլխավոր հերոսը կովկասցի մի հայ երիտասարդ է: Ուրեմն, Հայաստանը փրկված է բոլոր տեսակի արհավիրքներից, սովետական կարգերը նոր հաստատված են, 1920—1922 տարիներին է: Երիտասարդ արտասահմանցի հայը թողնում է իր ծընողը, իր բարեկեցիկ կյանքը և գալիս է Հայաստան, որպեսզի իր բազուկներով իր նպաստը բերի Հայաստանի վերակառուցման: Առնո Արևյանը է անունը:

Հազար ու մի դժվարություններով, մի քանի շաբաթ ճամփորդել և հետո, նա հասնում է առաջին գյուղաքաղաքը Հայաստանի հողի վրա: Իրիկուն է... Մի կերպ անցկացնում է գիշերը: Առավոտում զարթնում է և գնում է գյուղաքաղաքի հրապարակը: Արևյանը հրապարակի վրա տեսնում է բազմաթիվ հայ գյուղացիներ, բանվորներ, ծերեր, երիտասարդներ, կանայք, տղամարդիկ, դժգույն տեսքերով և հուսալքված հոգեվիճակով: Այդ երևում է մանավանդ նրանց դեմքերից: Բոլորը նստած են ծալապատիկ կամ մի քարի, մի կոճղի վրա ձեռքները կախ ընկած, կարծես անկենդան լինեին: Եվ Արևյանը այդ հայերի ձեռքերը նմանցնում է առնան չորացած տերևների, որոնք պատրաստ են առաջին քամու հարվածից ընկնելու և մահանալու: Եվ շարունակելով իր խորհրդածությունը ավելացնում է. «Արդյոք ե՞րբ այս ձեռքերը պիտի զարթնեն ու վեր բարձրանան»:

Այսօր, վաթսու տարի հետո, մենք հաստատում ենք թե այդ նույն ձեռքերը ինչե՛ր իրագործեցին մեր Հայրենիքում, նոր կյանքի պայմաններում: Գյուղացու, բանվորի և մշտավորականի մեռած թվացող ձեռքերը սկսան շարժվել, զարթնեցին, բարձրացան և ծանր աշխատանքի պայմանների մեջ, մանավանդ սկիզբի տարիներին, սկսան վերակառուցումը մեր երկրի: Մարիետա Ծաֆինյանը իր վեպում նկարագրում է, թե ինչպես կառուցվեց առաջին մեծ շինարարական ձեռնարկը Հայաստանում, առաջին հիդրոկայանը:

Այո՛, վերջապես այդ ձեռքերը արթնացան, և քաջ առ քաջ կերտվեց այն հողակապ հուշարձանը հայոց պատմության հոփիզոնի վրա, որ կոչվում է այսօր Սովետական Հայաստան:

Այդ կախ ընկած, մեռած թվացող ձեռքերը խորհրդանշում էին մեր տխուր և ողբերգական անցյալը: Իսկ շինարար ձեռքերը վաթսու տարիների ընթացքում հան-

դիսացան մեր ստեղծարարներկան: Այս ներկայով է, որ հայ ժողովուրդը սկսած է մաս իր ապագայի դռները բանալ: Մենք հավատացած ենք, որ մի ժողովրդի կյանքում էականը, հիմնական գործոնը, կենդանի ուժը՝ ներկան է, ոչ թե անցյալը: Անցյալը ներշնչող ուժ է, այո՛, բայց ներկան է, որ կենդանություն է տալիս անցյալին, անցյալը այժմեականացնում է, ակտուալ է դարձնում: Ակտուալ կենդանակե ակտիվե՝ րաժեղ, այսինքն գործի վերածել: Ներկան, մեր պարագային էլ, անցյալը վերածեց գործի, և սկսավ հիմքերը դարձնել մեր ապագային: Առանց կենդանի, գործող ներկայի՝ ապագայի դռները փակ կմնան որևէ ժողովրդի առջև: Մի ժողովուրդ միայն անցյալով չի կարող ապրել: Արդի Հայաստանը հայոց պատմության ներկան է:

Այն հարաբերությունը, որ կա հասարակական-ազգային կյանքում, անցյալի, ներկայի և ապագայի միջև, մենք հակված ենք մտանցնելու ծառի կյանքին: Ծառը ունի արմատներ, տերևներ և պտուղ: Արմատները անցյալն են, ներկան տերևներն են, իսկ ապագան՝ պտուղները:

Ծիշտ չէ, թե մի ժողովուրդ միայն արմատներով է ապրում: Ծառն էլ իր արմատներով չի ապրում: Արմատներից դեպի վեր բարձրանում է անկենդան տարերքը միայն: Բուն սնունդը կազմվում է տերևների մեջ, արևի լույսի և ջերմության ազդեցության ներքո, և տերևներն են, որ չրենց հերթին սնունդ են ուղարկում ամեն կողմ, մասն արմատներին: Նույն երևույթը, կարծում ենք, կարող ենք հաստատել որևէ ժողովրդի կյանքում: Ահա թե ինչու ասում են, որ մեր ժողովրդի կյանքում էլ ներկան է, որ կենդանի, գործող ուժ է հանդիսանում, որ կյանքի է կոչում մասն անցյալը: Մեկ օրինակ տանք. հայ դասական ճարտարապետությունը այս վաթսուն տարիների ընթացքում է, որ իրապես այժմեացավ և վերածնվեց և կենդանի դարձավ մեր նոր իրականության մեջ: Հին, դասական ճարտարապետությունը, որ թվում էր թե մեռյալ էր, կենդանացավ: Ապացույց: Անցյալ դարում Օշականի եկեղեցին կառուցվեց, բոլորովին հեռու հայկական ճարտարապետական ոգուց ու ոճից: Գևորգ Դ կաթողիկոսի ժամանակ Պոլսից մի հույն ճարտարապետ են հրավիրել: Այդ երանելի ճարտարապետը և այդ օրերին հայերը Հայաստանում կարծեք չեն տեսել մեր հրաշալի հարյուրավոր հին հուշարձանները և փոխանակ ներշնչվելու նրանցից, կառուցել են այդ եկեղեցին, որ ոչ մի ոճ և ոչ մի հոգի չունի, հակառակ որ Սուրբ Մեսրոպի գերեզմանի վրա է կանգնեցված:

Նույնը կարելի է ասել մախկին Գևորգյան ճեմարանի շենքի մասին, որ կառուցվել է նույնպես անցյալ դարու վերջերին: Երևում է, որ անցյալ դարում հայ հին, դասական ճարտարապետության զգացմունքը բացակայում էր մեր ժողովրդի, մեր հոգևորականների և մտավորականների գիտակցությունից:

Մեր ժողովուրդը հոգեփոխվեց սակայն վերջին տասնամյակներին՝ շնորհիվ մեր տաղանդավոր ճարտարապետների, արվեստագետների զարթոնքի: Նրանց մեջ հաղթեց ազգային ճարտարապետության ու արվեստի զգացմունքը և այսպիսով է, որ հայ հին ճարտարապետությունը մեր օրերին վերակենդանացավ, այժմեականացավ և ակտիվ վերածվեց:

Նույնը կատարվեց մասն այլ բնագավառներում: Թույլ տվեք հիշել Ս. Գրիգոր Նարեկացիի պարագան: Ս. Գրիգոր Նարեկացին, մեր ժողովուրդը և մտավորականությունը մանավանդ, գրեթե մոռացած էր: Մնացած էր կենդանի միայն եկեղեցու մեջ անշուշտ: Մեր մամիկները որպես աղոթագիրք՝ կարդում էին առանց մի բառ հասկանալու: Նույնիսկ մեր դարու սկզբին, առաջին պատերազմից հետո, հայտնի հեղինակը «Նահանջը առանց երգի» իր վեպի մեջ, ծաղրանքի առարկա է դարձնում մեր Նարեկացուն: Այս բոլորը ես ասում եմ ոչ իբրև մեղադրանք: Անցյալ ժամանակի ոգին է ցույց տալիս այդ: Հիմա՛ է, որ Գրիգոր Նարեկացին մեր Մատենադարանով, մեր գիտնականներով, Հայաստանի և ըստ փյունքի հեղինակների թարգմանություններով, լույս աշխարհ է բերվում: Եվ ես հավատում եմ, որ տակավին մա ճոր խոսք ունի ասելիք ոչ միայն մեր ժողովրդին, այլ համայն քաղաքակիրթ աշխարհին: Անցյալի, ներկայի և ապագայի մասին մեր կատարած դատողությունները իբրև տեսիլք ուրվագծվում է մասն մեր մահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի մեկ իմաստալից բանաստեղծության մեջ, որ կոչվում է «Նավասարդյան»: Եթե ուշադիր լինեք, պիտի տեսնեք, որ Վարուժանն նույն մոտեցումը ունի, անցյալը ներկա ուժ դարձնելու և ներկայում ապագայի դռները բանալու ըմբռնումով:

— Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան
սա տոներուն

Արևափառ,

Ա՛լ վերածնե փլատակներեն և փառագոչ
Քնարդ ա՛ռ:

Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին
Ցեղիդ

Մարմարեն կույս,

Մե՛նք, Զավակներդ օգոստոսիստ, պիտի
կերտենք

Նո՛ր արշալույս:

Փրկչի Իջման Ս. Սեղանից և մեր բոլորի
արտերից օրհնություն, բլո՛ւր օրհնություն
ամենայն հայոց նոր արշալույսին:

Տասնհինգ րոպե ընդմիջումից հետո ըս-
կրպում է հոբելյանական հանդիսության
գեղարվեստական մասը:

Առաջինը ելույթ է ունենում հայկական
նաղիդի և հեռուստատեսության ջութակա-
հարների խումբը՝ ղեկավարությամբ ՀՍՍՀ
ժողովրդական արտիստ Գևորգ Աճեմ-
յանի: Խումբը փալլուն հաջողությամբ և
խանդավառորեն կատարում է Ալեքսանդր
Հարությունյանի «Տոնական»-ը, Ստեփան
Զրբաշյանի «Ռապսոդիա»-ն Սայաթ-Նո-
վայի թեմաներով:

Վաստակաշատ դերասանուհի Մետաքս-
յա Սիմոնյանը ապրումով արտասանում է
Գեղամ Սարյանի և Հրաչյա Հովհաննիսյանի
հայրենասիրական ստեղծագործություննե-
րից ընտրովի հատվածներ:

Ապա ելույթ է ունենում Էջմիածին քա-
ղաքի նորակազմ «Ծողակաթ» լարային
նվագախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն
Երկանյանի: Նվագախումբը կատարում է
Ժարտիդի «Սարապանդա»-ն և երաժշտա-
գետ Ռուբերտ Աթայանի մշակումով՝ Նա-
րեկացու Հարության տաղը, ու Կոմիտաս
վարդապետի «Ծիրանի ծառ»-ը՝ Ալամազ-
յանի մշակումով, ինչպես նաև «Զրօրի-
նեաց» տաղը, «Ով գարմանալի» և «Այսօր
ձայնն իհարական»:

Հանդիսականները խանդավառորեն ող-
ջում են արգենտինահայ սիրված քա-
նաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանին, որն
արտասանում է իր «Նամակ առ Հա-
յաստան» հայրենաշունչ, խոհական քա-
նաստեղծությունը:

Այնուհետև Ս. Գրիգոր Նարեկացու «Մա-
տեան ողբերգութեան» ստեղծագործության

ծաղկաքաղ հատվածների գրաքար և աշ-
խարհաքար արտասանությամբ հանդես է
գալիս վաստակավոր արտիստուհի, աս-
մունքող Սիրվարդ Մեսրոպյանը, որին դաժ-
նիք ողջունում է ջերմորեն:

Հայրենի քանաստեղծ Գևորգ Էմինը
հանդեսի հայրենասիրական տրամադրու-
թյունը քազմապատկում է իր հայրենա-
շունչ մի քանի ստեղծագործությունների սե-
փական արտասանությամբ:

Մայր տաճարի երգչախմբի մենակատար
Էլենոռա Մելքումյանը ապրումով ու հու-
զումով երգում է Կոմիտաս վարդապետի
«Կանչե՛, կոռուկ»-ը: Նույն երգչախմբի մե-
նակատար Վալերի Հարությունյանի քաջն
Անդրանիկին նվիրված «Իբրև արծիվ սա-
փառնում ես» ժողովրդական երգը հնչում է
խրթխտ և տպավորիչ:

Հանդիսության գեղարվեստական բաժ-
նում ելույթ է ունենում նաև Հայաստանի
սիրված ժողովրդական արտիստուհի Լու-
սինե Զաքարյանը, որը կատարում է Կոմի-
տասյան «Կաքավիկ»-ը և «Լորիկ»-ը, ապա
Հովհաննես Բաաճյանի հետ՝ Կոմիտասի
«Հաքքալ»-ը:


Հանդիսության վերջում Մայր տաճարի
երգչախումբը, Հայաստանի վաստակավոր
արտիստ, խմբավար Խորեն Մելիսանեջյանի
ղեկավարությամբ, կատարում է Էդգար
Հովհաննիսյանի «Հայաստան»-ը և «Սար-
դարապատ» խմբերգերը և ապա Ալեքսան-
դր Հարությունյանի «Հայրենիք» կանտա-
տի առաջին մասը՝ արժանանալով հանդի-
սականների բարձր գնահատությանն ու
սրտագին ծափահարություններին:

Հայաստանի փառապանծ վաթսուհամ-
յակին նվիրված հանդիսության գեղարվես-
տական բաժինը անցնում է խանդավառ
մթնոլորտում:

Հանդիսականները դափնիքից բաժանվում
են բարձր տրամադրությամբ՝ իրենց հետ
տանելով լավագույն և անմոռանալի տպա-
վորություններ Հայաստանի վաթսուհամ-
յակին նվիրված հանդիսություններից:



ԿԱՄՈՒՐԻՑ ՀԱՍՏԻՆԱՆ ԳԵՏԻ ՎՐԱ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մովսիս վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա հագեցցին» (Մատթ. Ե 6) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ նորոգ հանգուցյալ, Արարտյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի հիշատակին:

*
* *

Դեկտեմբերի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 12-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում

է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Դեկտեմբերի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արաքսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Բազում մասամբք եւ օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիք. Ի վախճան ատուցս այսոցիկ խոսեցաւ ընդ մեզ Որդովն զոր եղ ժառանգ ամենայնի, որով եւ զյափտեանսն արար» (Եբր. Ա. 1—2) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է քառասունքի հոգեհանգիստ՝ հանգուցյալ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, արվեստաբան դոկտ. Սարգիս Մելիքսեթյանի հիշատակին:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է հանգուցյալի հարազատներին և մխիթարիչ խոսք ասում նրանց՝ կրած մեծ կորստի համար, ոգեկոչելով հանգուցյալի հիշա-

տակը և գործունեությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

* *

Դեկտեմբերի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

* *

Դեկտեմբերի 15-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճամբարանում վերսկսվեցին 1980—1981 ուսումնական տարվա կիսամյա քննությունները, որոնք տևեցին մինչև սույն ամսի 30-ը: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ ուսանողները լավագույն կերպով պատրաստվել էին կիսամյա քննություններին, և դրանց արդյունքները ուրախացուցիչ են ու խանդավառ:

* *

Դեկտեմբերի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս.

պատարագ է մատուցում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի ամենայն որ բարձրացրեցանք զանձն, խոնարհեցի. և որ խոնարհեցուցանե զանձն՝ բարձրացի» (Դուկ. ԺԴ 11) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:


* *


Դեկտեմբերի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

* *

Դեկտեմբերի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ արք. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ հանգամանալից կերպով տալով Մնասնեի առակի մեկնությունը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամեն տարի նախապես և առաջին մարտիրոս Սուրբ Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում նշվում է առանձնակի շուքով: Եվ այդ տոնը հոգևոր ճեմարանի համար, որպես նվիրական ավանդույթ, նշանավորվում է լսարանական ուսանողների սարկավագական ձեռնադրությամբ: Այդ ավանդույթի շարունակությունն է այս տարեվերջին սարկավագների նոր հունձը:

Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի.—Տօն Սրբուն Ստեփաննոսի նախապկային և առաջին մարտիրոսին:

Առաջիտյան տեղի է ունենում հանդիսավոր ժամերգություն, որի ընթացքում կատարվում է շարականների հանդիսավոր երգեցողություն՝ Մայր Աթոռի սարկավագների կողմից:

Ժամերգության ընթացքում «Փառք ի բարձունս Աստուծոյ...» փառաբանական օրհներգության երգեցողության ժամանակ, սաղավարտներով և բուրվառները ձեռքներին, եկեղեցական ատյան են դուրս գալիս Մայր Աթոռի սարկավագները և խնկարկում Ս. Ստեփանոսի խորանը, հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին: Իսկ ժամերգության ավարտին լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը շնորհավորում է սարկավագներին՝ նրանց տոնի ուրախ առիթով:

Ժամը 11-ին Մայր տաճարի Ս. Ստեփանոս նախասարկավագի խորանին սկսվում է տոնական պատարագի սրբազան արարողությունը: Օրվա պատարագիչն է հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս արք. Չաքալյանը: Պատարագի Սուրբ գրական ընթերցումներից առաջ սկսվում է հոգևոր ճեմարանի Բ լսարանի վեց ուսանողների սարկավագական ձեռնադրությունը: Նորընծաները իրենց սարկավագական կոչումը ստացել էին մեկ օր առաջ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի: Նույն օրը միաժամանակ Սրբազան հայրը դպրության չորս աստիճաններ շնորհեց հոգևոր ճեմարանի Գ դասարանի ութ ուսանողների:

Զեռնադրության խորհրդավոր պահն է: Հնչում է «Աստուածային և երկնատուր շնորհա...» շարականի հանդիսավոր երգեցողությունը: Վեց նորընծաները ծնկաչոք, ձեռքները ուսերից վեր պարզած, աշխարհիկ կյանքից հրաժարվելու խորհրդանշական դիրքով դառնում են դեպի ժողովուրդը...: Դա ձեռնադրության ամենանվիրական ու խորախորհուրդ պահն է: Ծարունակվելով սրբազան արարողությունը, ձեռնադրության Մաշտոցից աղոթքների ընթերցումներից և մասնավոր շարականների երգեցողությունից հետո, ձեռնադրող սրբազանը հերթով սարկավագական խորհրդանիշ սուրբ ուրար կրելու, ժաշու Ավետարան ընթերցելու և սրբազան խորանին սպասարկելու, «վերաբերում» կատարելու իրավունք է շնորհում վեց նորընծաներին:

Զեռնադրության արարողությունը ավարտվում է Սրբազան հոր «Պահպանիչ»-ով:

Այնուհետև շարունակվում է՝ սուրբ պատարագը՝

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը խոսում է քարոզ, դարեր շարունակ օրվա խորհրդի կրոնա-բարոյական և հոգեվոր նշանակության մասին Հայ Եկեղեցու և Մայր Աթոռի կյանքում՝ վեր հանելով

քրիստոնեության հաղթանակի ու տարածման համար նախատեսված առաջին մարտիրոսի՝ Ստեփանոս նախավկայի հավատքի գործությունն ու անձնվիրումը, որը մնալուն նկարագիրն է ամեն մի անբասիր ու իր եկեղեցուն նվիրված հոգևորականի:

Հավարտ սուրբ պատարագի Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը Վեհաբանում Վեհափառ Հայրապետին է ներկայացնում Մայր Աթոռի

Ճաշկերույթին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և այլ հյուրեր:

Սեղանի շուրջ գոհունակ սրտով առաջինը խոսք է առնում Վեհափառ հայրապետը: Նորին Սրբությունը, կրկին անգամ արտահայտելով իր ուրախությունը տարկավազական նոր ու բարի հունձի համար,



Ձեռնադրությունից մի պահ

Աթոռի ավագ և նորընծա վեց սարկավագներին:

Նորին Սրբությունը սարկավագներին տալիս է հայրական իր օրհնություններն ու հորդորները, մաղթում և հույս հայտնում, որ նրանք կրկին վերանորոգված օրվա խորհրդով, պիտի շարունակեն սիրով ու նվիրումով ծառայել Հայ Եկեղեցու, Մայր Աթոռի և մեր ազգի ծառայության սրբազան գործին:

Սարկավագները իրենց տոնի առթիվ Վեհափառ Հայրապետից աջահամբույրով նվերներ են ստանում:

Նույն օրը, ժամը 14.30-ին, Մայր Աթոռի միաբանական սեղանատանը, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, տրվում է ճաշկերույթի պատիվ վեց նորընծա սարկավագների:

Հնորհավորում է նորընծաներին և տալիս հայրական իր օրհնություններն ու թելադրանքները:

Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանի խոսքից հետո, ի դիմաց Մայր Աթոռի միաբանության և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, հաջորդաբար իրենց սրտի շնորհավորական խոսքն ու բարեմաղթություններն են անում Տ. Գարեգին արք. Ներսիսյանն ու Տ. Կոմիտաս արք. Հովնանյանը: Բոլորի մտածումներն էլ ներշնչված ու համեմված էին օրվա խորհրդով:

Ճաշկերույթի վերջում, որպես նորընծաների զգացումների ազնիվ թարգման, պատասխան շնորհակալական ու երախտագիտական խոսքով հանդես է գալիս Աշոտ սարկավագ Պետրոսյանը՝ խոստանալով, որ

հետախույզ կանգնեց ամեն կարելին՝ լիիրավ կատարելու համար իրենց կոչումից բխող բոլոր պարտականությունները և կլինեն «Յայգուջ Տեառն մշակք առանց ամօթոյ»:

Սիրո ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:

*
*
*

Աշոտ սարկավագ Պետրոսյան. ծնվել է 1956 թվականի հունվարի 8-ին Երևանում: 1974 թ. ավարտել է Երևանի համար 24 երեկոյան միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1980 թվականի դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:

Ալեքսան սարկավագ Թազայան. ծնվել է 1958 թվականի հունվարի 5-ին, Վրացական ՍՍՀ հոգաբարձության շրջանի Օրոջալար գյուղում: 1974 թ. ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը: 1977 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան: 1980 թվականի դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:

Ստեփան սարկավագ Կարապետյան. ծնվել է 1959 թվականի մարտի 20-ին, Էջմիածին քաղաքում: 1976 թ. ավարտել է Էջմիածնի համար 2 միջնակարգ դպրոցը: 1977 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան: 1980 թվականի դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:

Սմբատ սարկավագ Արիստակեսյան. ծնվել է 1959 թվականի սեպտեմբերի 18-ին Էջ-

միածնի շրջանի Հայթաղ գյուղում: 1976 թ. ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը: 1977 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան: 1980 թվականի դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:


Վարդան սարկավագ Բաղդասարյան. ծնվել է 1961 թվականի մարտի 3-ին, Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում: 1978 թ. ավարտել է Երևանի համար 152 միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել հոգևոր ճեմարան: 1980 թվականի դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:

Մեսրոպ սարկավագ Խաչիկյան. ծնվել է 1962 թվականի հոկտեմբերի 2-ին, Էջմիածին քաղաքում: 1977 թ. ավարտել է ծննդավայրի Երվանդ Օտյանի անվան համար 7 միջնակարգ դպրոցի ութամյա դասընթացը և նույն տարին ընդունվել հոգևոր ճեմարան: 1980 թվականի դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա սարկավագներին և բարեմաղթում, որ նրանք իրենց ուսումնառության և Մայր Աթոռի ծառայության տարիներին արդարացնեն Հայոց Հայրապետի բարձր վստահությունը՝ նվիրյալ կերպով ծառայեն Հայ Եկեղեցուն ու կատարեն իրենց պարտականությունները:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ





ՀԱՆԳԻՍՏ
Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
(1925—1980)

Ծանր հիվանդությունից հետո, դեկտեմբերի 3-ին, չորեքշաբթի օրը, 55 տարեկան հասակում, ի Տեր հանգյալ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

Նրա վաղաժամ մահով մեծ կորուստ կրեց Մայր Աթոռն ու միաբանությունը:

Հանգուցյալ արքագանը (ավագանի անունով՝ Ստեփան) ծնվել էր 1925 թվականին, Դամասկոսում (Սիրիա) և ապա ծնողների հետ վերահաստատվել Ալեքսանդրետի՝ երբեմնի պատմական Հայոց ծոցի Սովուգ-Սու գյուղում, ուր և անցել է նրա մանկությունը:

Մանավանդ վաղ հասակից Ստեփանը զրկվում է ծնողական գորգորանքից և որք մեծանում՝ ճաշակելով որքության դառնությունն ու զրկանքները:

1938—39 թվականներին երբ Ալեքսանդրետի հայափոշ շրջանը (այժմ՝ Սանջակ) ֆրանսիական իշխանությունների որոշումով անջատվելով Սիրիայից, անարդարորեն հանձնվում է Թուրքիային, և սկսվում է հայկական մի նոր տարագրություն, Ստեփանը ևս հայ գաղթականների հետ ապաստան է գտնում Լիբանանի հյուրընկալ մայրաքաղաք Բեյրութում, ուր նա շարունակում է իր կիսատ մնացած մաթակրթության ուսումը, Աբգարյան ազգային վարժարանում:

1941 թվականին նա ընդունվում է Երու-



սաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարան որպես ուսանող և իր բնածին քաղցր ձայնով հմտանում մանավանդ եկեղեցական երաժշտության մեջ ու իր շուրջ ստեղծում համակրանք և հովանավորություն վանական իշխանության կողմից:

1945 թվականին ավարտում է ժառանգավորաց վարժարանի դասարանական թափնը և սարկավագ ձեռնադրվում Ս. Կյուրեղ պատրիարքի օրոք: Երկու տարի հետևում է ընծայարանի եկեղեցական, մասնագիտական դասընթացներին:

1947 թվականի օգոստոսին հեյրութից ներգաղթում է Հայրենիք և լուսահոգի Ս. Գևորգ Զ կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ ընդունվում է որպես սարկավագ միաբան Մայր Աթոռի:

1951 թվականին Սեփական սարկավագը կուսակրոն քահանա է ձեռնադրվում՝ վերանվանվելով Ս. Կոմիտաս արքեպիսկոպոսի ձայնեղ հոգևորականի առաջ քացվում է հոգևոր ծառայության գործունեության լայն ուղի: Նա նշանակվում է Ս. Գեղարդ վանքի վանահայր, ապա՝ հոգևոր հովիվ՝ 1951—1956 թվականներին Բաքվի և Թբիլիսիի հայոց եկեղեցիներում:

1956 թվականի հունվարից Ս. Ս. Վազգեն Ա կաթողիկոսի կողմից նշանակվում է Ծիրակի թեմի առաջնորդ և 1957-ին՝ վրահայոց թեմի առաջնորդ, պաշտոն, որը վարում է մինչև 1971 թվականը: 1972 թվականին նշանակվում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

1957 թվականի նոյեմբերի 24-ին Վեհափառ Հայրապետից Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվում՝ օծակից ունենալով Ս. Ասողիկ եպս. Ղազարյանին և Ս. Բաբգեն եպս. Վարժապետյանին:

Հանգուցյալ սրբազանը իր բարեմույն բնավորությամբ, որպես Մայր Աթոռի խոստումնալից բարձրատիճան հոգևորականներից մեկը, իր նվիրումով ու եռանդով ծառայել է Մայր Աթոռին, Հայ Եկեղեցուն արդարացնելով Հայոց Հայրապետի բարձր վստահությունը իր անձի հանդեպ:

Մայր Աթոռը դեռևս նրանից ապաստում էր նոր ծառայություններ, երբ մահը անակրկալորեն կտրեց նրա օգտակար կյանքի թելը:

Հանգուցյալ սրբազանի վերջին օծումը կատարվում է Երևանի Ա. Սարգիս եկեղեցում, ուրբաթ օրը՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանի:

Օրվա Հանգստյան սուրբ պատարագը մատուցում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի փոխանորդ Ս. Գարեգին արք. Ներսիսյանը, որը և իր դամբանական քարոզում ներկայացնում է Ս. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի կյանքը՝ վեր հանելով նրա թեմական քեղմավոր գործունեությունը, մանավանդ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի պատասխանատու պաշտոնում:

Ժամը 15-ին հանգուցյալ սրբազանի դագաղը փոխադրվում է Էջմիածին, Ա. Գայանե վանքի եկեղեցի, ուր և կատարվում է Հոգեհանգստյան կարգը:

Արարողությանը ներկա է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներով:

Արարողությանը ներկա է նաև ՀՍՍՀ Միմիատրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Անդրանիկ Հասրաթյանը:

Արարողության ավարտին, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը հանգուցյալին հրաժեշտի խոսք է ասում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում հանգուցյալ սրբազանից ու վերադառնում Վեհարան:


Եկեղեցական թափորով Ս. Կոմիտաս արքեպիսկոպոսի դագաղը դուրս է բերվում եկեղեցուց: Ս. Գայանե վանքի միաբանական գերեզմանատանը ամփոփվում է անյունը հանգուցյալ սրբազանի:

Կիրակի օրը, դեկտեմբերի 8-ին, ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան կարգ:

Ս. Հուսիկ արքեպիսկոպոսը, հանուն Մայր Աթոռի միաբանության, ցավակցություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ միաբանության կրած մեծ կորստի համար, և երկար կյանք ու քաջաոգոջություն մաղթում Հայոց Հայրապետին:

Ժամը 14.30-ին վանական սեղանատանը հոգեհաշ է տրվում, որին ներկա են լինում նաև հանգուցյալ սրբազանի հարազատները:

Վեհափառ Հայրապետը «Հոգաց» է արտառանում Ս. Կոմիտաս արքեպիսկոպոսի հոգու խաղաղության համար և օրհնում նրա հիշատակը՝ մաղթելով, որ այն կենդանի մնա Մայր Աթոռում և միաբանության անդամների սրտերում:



Ա. ՄԱՂՈՑԱՆ

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՐԱԲՈՒՆԻՆ ԵՎ ՆՐԱ «ՈՏԱՆԱԻՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

Կիլիկիայի հաշոց պետությունը մեծ նվաճումների հասավ Լևոն Գ թագավորի (1270—1289) օրոք, առավել աշխուժացան միջազգային կապերը, առևտուրը: Նա մշակութային ու դպրության ստորար, կազմակերպիչ ու ղեկավար էր, հիմնել է դպրոց ու վարդապետարան, խթանել դրանց առաջընթացը, օգնել, հովանավորել է գիտության ու արվեստի մշակներին:

Ժամանակի խոշոր պետական ու մշակութային գործիչ Վահրամ Րաբունին նրանցից էր, որ վաղելել են մեծագործ թագավորի հովանավորությունը:

Վահրամ Րաբունին, 13-րդ դարի նշանավոր եկեղեցական գործիչը և փիլիսոփան, կարևոր դեմք է մասնագրականության ապարեզում: Նրա գրական աշխատանքները կապված են Լևոն Գ թագավորի անվան հետ:

Ծառ քիչ քան է հայտնի Րաբունու կենսագրության մասին: Հոր անունը եղել է Տիգրան: Իր երկերից մեկի մեջ Վահրամն իր մասին գրել է՝ «Վահրամայ վարդապետի, Կիլիկեցու՝ Ստյ քաղաքի»¹: Բացի Սսեցի, Կիլիկեցի կոչվելուց, Րաբունին հայտնի է եղել մասնակցությամբ, Եդեսացի

մականուններով²: Մանկությունից կապված է եղել թագավորական ընտանիքի հետ:

Գ. Գրիգորյանի ենթադրությամբ Վահրամ Րաբունին «ծնված պետք է լինի 13-րդ դարի 30-ական թվականների կեսերից ոչ ուշ»³: 1271 թ. հունվարի 6-ին Լևոն Գ թագավորի օծման հանդիսությունների ժամանակ արտասանած ճառում Վահրամն ասում է, որ Ջալել թագուհին երախտիք ունի իր ուսումնառության գործում. «Երանելին Ջալել թագուհի, որոյ ողորմութեանն և առատ պարգևացն՝ որ առ ուսումնականսն, պտուղ է մերսն անաստութիւն, և ևս վեհագունից քան զմեզ»⁴: Վահրամը ծնված պիտի լինի մոտավորապես 1235 թ.:

² Տե՛ս Գ. Գրիգորյան, Վահրամ Րաբունու փիլիսոփայությունը, Երևան, 1969, էջ 13. Բ. Պատկանյան, Հայ պատմագիրների երկասիրությանց ցուցակը. «Փորձ» ազգային և գրականական միամսյա հանդես, 1880 թ., 1, Տփղիս, Հավելված, էջ 29:

³ Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 15:

⁴ «Ի մեծի Յայտնութեան Բրիստոսի, վերլուծութիւն քանին Երայեայ, յետ որոյ և հաւաքմունք Աստուածաշունչ քանից թարգման յարիմեայ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ և իմաստասիրական սահմանա շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր անեալ ձեռնադրեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լևոն», «Արարատ», 1869, թ. Ե, էջ 101: Ջալելի բարեգործությունների մասին Վահրամն ակնարկում է մասնակցությամբ «Ուսանաւոր աւստմութեան» մեջ (էջ 219).

Եւ թագուհին Ջալել կոչեալ՝

Ի քարի գործնս յառաջեալ...

¹ «Վահրամայ Րաբունույ Ուսանաւոր պատմութիւն Ռուքիմեանց» հետևյալ գրքում. «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, ՌԻԸ—1859, էջ 185: Այսուհետև՝ Վահրամ Րաբունի, Ուսանաւոր պատմութիւն Ռուքիմեանց:

1263 թ. Հեթում Ա թագավորը ունի Ռաբունու իր հետ տարել է Անտիոք: Գ. Գրիգորյանը սրան նույնացնում է Վահրամ Ռաբունու հետ, պատճառաբանելով, թե ուրիշ Ռաբունի այդ շրջանում չկար: Եթե ճիշտ է այս նույնացումը, դա կնշանակի, թե Հեթումի ժամանակ Ռաբունին արդեն պալատում էր կամ մոտ էր կանգնած արքունիքին⁵: Այն հանգամանքը, որ Ռաբունին Հեթում թագավորի հարցին պատասխան է գրել, հուշում է, որ Լևոն Գ թագավորի հոր ժամանակ ևս նա որոշակի հեղինակություն ուներ և դիրք: Եվ շատ կարևոր է, թե երբ է Վահրամը դարձել արքունիքի առեմադրային՝ կանցլեր, իսկապես 1276—77 թթ. հետո, թե ավելի վաղ⁶:

Վահրամ Ռաբունին հարուստ գրական ժառանգություն է թողել⁷:

Հայ մատենագրության ամենահետաքրքրական վավերագրերից է Լևոն Գ թագավորի օժանդակությամբ արտատպան առաջին⁸, որ կարող էր արքայի և գիտնականի համագործակցության սկիզբ դառնալ, թեպետ չի բացառվում, որ մինչ այդ ևս նրանց միջև սերտ հարաբերություններ հաստատված լինեին:

Վահրամի անունով հայտնի՝ «Յաղագս սուրբ Երրորդության» ճառը Ղազար Զահեցին վերագրել է Վահրամ-Գրիգոր Վկաստերին: Այս առթիվ Հ. Մատթեոս Մաղաթ-Թեոփիլյանը նկատում է. «Կայ յանուն Վահրամ վարդապետի ուրումն ճառ ի վերայ խորհրդոյ Երրորդության. յորում ըստ Յունաց ճառ է զՀոգւոյն սրբոյ, որ հաւատեալ թոյի գրեալ ի Վահրամայ աստի պատմչէ, զի ծանուցանէ ի վերջաբանին՝ թէ

գրեալ է ի հրամանէ Լևոնի արքայի»⁹: Այնուհետև նա շարունակում է. «Նորին Վահրամայ պատմագրի են և այլ զանազան ճառք ի վերայ տօնից, յաւորս Լևոնի արքայի»: Վերջապես, Լևոն արքայի պատվերով էր, որ Ռաբունին Ռուբինյան հարստության փառքը երգեց, տաղաչափելով նրանց հերոսական պատմությունը:

Հ. Մ. Մաղաթ-Թեոփիլյանը իրավամբ վստահելի է համարում Վահրամի հաղորդած տեղեկությունները, նկատելով, թե նա «ի ստիպելոյ արքային» ձեռն էարկ այն և գրեաց զնոյն զգուշաւոր տեղեկութեամբ, ուրոց ևս գրեթէ ամենայնի էր ակամատես»¹⁰: Համանման դիտողություն ունի և Մաղաթիս արքեպս. Օրմանյանը. «Լևոն Գ ալ ոչ նվազ նշանավոր եղալ յուր գործունեությամբ, քան Լևոն Բ Ստեփանյան ատաշին թագակալը, և որչափ ալ իրեն մտերիմն ըլլա յուր գովաբան Վահրամ Ռաբունին, ասկայն պատմած իրողությունները ճշմարիտ արդյունքներ կը պարունակեն, զոր համահունչ կը կրկնէ տարեգրողը»¹¹: Խոսքը վերաբերում է Սամուել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» աշխատության շարունակողին: Մ. Օրմանյանը ցույց է տալիս, որ առհասարակ Ռաբունու հաղորդումները համաձայն ու համահունչ են Սրմբատ Սպարապետի, Կիրակոս Գանձակեցու, Վարդանի և ուրիշների տեղեկություններին: Ռաբունու մասին գրել են նաև Հ. Ղ. Ալիշանը, Հ. Գ. Զարպիսանյանը, Քերովքե Պատկանյանը, օտար հայագետներից՝ Կ. Նոյմանը, Է. Դյուրրիեն: Մանուկ Աբեղյանը Ռաբունուն համարում է «ծամանակալից Ծնորհալու»¹², թեև մի այլ տեղ ասում է, որ Ծնորհալու Վիպասանությունից 150 տարի հետո Լևոն Գ թագավորը «Վահրամ Ռաբուն կոչված վարդապետին շարունակել է տվել այն, սկսած թուրքերի հարձակումից և վերջին Գագիկ Բագրատունի թագավորից մինչև մոտ 1275 թիվը»¹³:

Ռաբունին իր գրական գործերը ստեղծել է մեծ մասամբ Լևոնի գահակալության շրջանում: Դրանց գրության ժամանակը սահմանափակվում է 1270—1289 թթ. միջև: Օժման ճառը հայ մատենագրության բա-

⁵ Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 15: Պետք է նշել, որ նույն ժամանակ հայտնի էր նաև Սոսթենես Ռաբուն. տե՛ս Հ. Ղևոնդ Ալիշան, Սիսուան. Համագրություն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ, Վենետիկ—Ս. Ղազար, ՌՅԼԵ—1885, էջ 516:

⁶ Տե՛ս Գ. Գրիգորյան, էջ 14:

⁷ Նրա փիլիսոփայական աշխատությունների մասին և առհասարակ երկերի ցանկը տե՛ս Գ. Գրիգորյանի հիշյալ աշխ. էջ 19—23: Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 516: Դավիթ Անհաղթի «Սահմանքի» մեկնության մասին տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թ. 2, էջ 115—159. «Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը»:

⁸ «Արարատ», 1869, թիվ Ա, էջ 8—9, թ. Բ, էջ 86—89, թ. Գ, էջ 49—52, թ. Դ, էջ 73—78, թ. Ե, էջ 97—101: Այսուհետև՝ ամսագրի համարը և էջը կնշենք շարադրանքի մեջ, փակագծերով: Ծառը առանձին գրքով. Վահրամ Ռաբունի, հան ի յայտնություն Տեառն և յօծումն Լևոն Գ արքայի, Երուսաղեմ, 1875:

⁹ «Կենսագրություն երևելի արանց, զոր ծաղկաբաղ համառոտեաց լընդարձակ բառարանէն իւրմէ յերկուս հատորս Բ. Մատթեոս վ. Մաղաթ-Թեոփիլյանց», հտ. Բ, Վենետիկ, 1839, էջ 542:

¹⁰ Անդ:

¹¹ Մաղաթիս արքեպս. Օրմանյան, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, § 1156:

¹² Մ. Աբեղյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 95:

¹³ Անդ, էջ 114: Հմմտ. Հր. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, Ե, Երևան, 1962, էջ 26:

ցառիկ էշերից է, ուր հեղինակը հավոր պատշաճի ճառելուց հետո հայտնում է իր հետագա խոսելիքի ծրագիրը. «Նախ առաջին, քննելով, թե՛ զի՞նչ է թագաւորութիւն, և ապա թե՛ ո՞վ է առաջին թագաւոր. և երրորդ թե՛ յորմէ՞ հետէ և կամ զի՞արդ սկսաւ թագաւորութիւն ի մարդիկ. և չորրորդ թե՛ զի՞նչ են կարգ և իրաւունք թագաւորի»¹⁴: Ըստ այսմ ճառը բաժանված է հատվածների, և այդ բաժանումը հատակորեն ընդգծում է հեղինակը, գրելով, օրինակ. «Զկնի առաջելոցս քե՛ր ըստ երրորդ խոստմանն մերում տեսցուք, թե՛ յորմէ՞ հետէ կամ զի՞արդ ի մարդիկ սկսաւ թագաւորութիւնն»¹⁵:

Ծառ արծեալոր են Վահրամ Բաբունու հայացքներն ու պատկերացումները պետական-քաղաքական կյանքի մասին¹⁶: Նա մերժում է իշխանների քանաւորութիւններն ու կենտրոնախույս ձգտումները, կոչ է անում աստարել երկրի պաշտպանութեանը, հնազանդ լինել թագաւորին: Մյուս կողմից, թագաւորը չպիտի գոռոզանա, ինչպէս Ծնորհալին էր ասում, չպետք է անարդար լինի¹⁷: «Ո՛չ երևի ի փառաքն քարծրամտի, այլ սպասաւոր Աստուծոյ թագաւորութեանն զինքն կարծել»¹⁸,—գրում է Բաբունին: Պատմական թոռնիկ ակնարկով նա հիշում է Մերձավոր Արևելքի մի քանի թագաւորների, Հայկի ու Բելի առասպելից սկսած, և հարում. «Վային և ի յոլով կողմանս և տեղիս և բռնակալութ պիտակապէս կոչեալք թագաւորք յոլովք և անթիւք, զորոց լռելի է զանուանան, իբրև զարանց յուսացելոց ի զարութիւն քազկի իրեանց» (Բ, 38): Այստեղ վերոհիշյալ սկզբունքի մի այլ կողմն է ի հայտ գալիս. հեթանոս թագաւորները քարծրամտելով՝ իրենց քազկին են ապավինել, չհասկանալով, որ իրենք կոչված են ընդամենը Աստուծո թագաւորութեան սպասավոր լինելու: Լևոն Բ արքան (1187—1219) անվերապահ գովեստի է արժանացել «Ոտանաւոր պատմութեան» մեջ իբրև քաղաքաշտ թագաւոր.

«...Յորմէ Լեւոնն ոչ երկուցեալ,
ի քազութեանցն ոչ զարհուրեալ,
Այլ ի յԱստուած ապաւինեալ,
Սակաւ արամբք ընդդէմ եղեալ
Եւ զքազմութիւնն յաղթահարեալ»¹⁹:

¹⁴ «Արարատ», 1869, թ. Ա, էջ 9:

¹⁵ Անդ, թ. Բ, էջ 37:

¹⁶ Ծառում արտահայտված՝ Բաբունու ընկերային և քաղաքական հայացքների քննությունը տե՛ս Գ. Գրիգորյան, ԳԶՎ. աշխ., էջ 33—40:

¹⁷ Հմմտ. Ներսէս Ծնորհալի, Բանք չափաւ, Վեհայիկ, 1880, էջ 329—330:

¹⁸ «Արարատ», 1869, թ. Ա, էջ 9:

¹⁹ «Ոտանաւոր պատմութիւն Ռորինեանց», էջ 213:

Ինչպէ՞ս պիտի լինեն «զկարգ և զկենցաղաւարութիւն, և զգործ, և զիրաւունս» թագաւորի: Այս հարցը, Բաբունու կարծիքով, լավագոյնս լուսաբանված է Աստվածաշնչում. «Քաջ գիտելով, զի քարութիւն անցաւ քազմաց, և չարութիւն յոլովից հասանէ, վասն որոյ պարտ և արժան է պատկաւորիլ թագաւորի, քարեպաշտութեամբ, խոհեմութեամբ, հեզութեամբ, իմաստութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ» (Գ, 52): Ընդհանրապէս թագաւորի ամենամեծ զարդը քարեպաշտութիւնն է. «Էբրև զհիմն ինչ պիտանի է թագաւորի՝ քարեպաշտութիւն, որ առանել թագապաճոյն կազմէ զնա քան զականս պատուական և շքեղացոյնս, քան զտէրութիւնս քազում աշխարհաց» (Դ, 73):

Վահրամ Բաբունին անդրադառնում է և արդարադատութեան խնդրին, որ պակաս կարևոր չէ: Նա խրատում է, որ չի կարելի ձանձրութիւն կամ «հաւառ և սուր» երևալու ձգտումով դառնել արագ, թոռնիկ. «Քանզի զայն ոչ վաշել է մարդկանս առնել, որոց կարծողադատ և կասկածալճիւ է ատեան դատաստանին, այլ՝ մեծապէս քննութեամբ և աշխատասիրութեամբ հասու լինել» (Դ, 77): Ըստ որում, «ո՛չ է պարտ թագաւորի ի լսելն միայն հաւատալ չարախաւսութեան, այլ յոյժ քննել, որպէս և Աստուած զինքն արիւնակ եղ դատարարացն՝ քննելովն զտղոմալեցիսն: Զի թե՛ թագաւոր սիրէ զառ ունկն ճառս, և զարս մատնիչս, յա՛յն աճեն մարդիկ և զնոյն միշտ առնեն... Եւ յորժամ ըստ կարողութեան ի վերայ հասցէ իրաւանցն առանց խղճմտութեան և թերութեան, յայնժամ և ո՛չ ըստ միոյ իրաց մի՛ փոխեցէ և վաճառեցէ զճշմարտութիւնն» (Դ, 77): Արդարութիւն իրագործելիս ոչ թե միշտ պիտի նեղել հպատակներին, այլ՝ «երթեմն ողորմութիւն խառնել չիրաւունսն», և դա պետք է անել «ըստ տեղոյ և պատշաճի» (Դ, 77—78): Ամեն ոք պարտավոր է «սիրել զստուգութիւն և ճշմարիտ լինել յամենայն»:

Պետութեան շահերից ելնելով, Բաբունին իշխաններին ևս խրատներ է տալիս: «Պարտ է անցին, —ասում է նա,— խոնարհութեամբ և ամենայն առաքինութեամբ զարդարում և քարեձև երևիլ: Մանաւանդ սէր սերտ ունելով առ թագաւորն և առ միմեանս, մի՛ նախանձիւ ընդ փառս և ընդ յառաջադիմութիւն իրերաց, և մի՛ մախանաւք այրիլ, զիրեարս խաժատել և ի միմեանց սատակիլ: Այլ և իշխանին պատշաճ իմաստութեան պարապել, ոչ զինարքուաց և լկտի երգոց, կամ ունայն զքաղմանց, յաղոյց և որսոց...» (Ե, 98—99):

Մեզ տվյալ դեպքում ավելի է հետաքրքրում ճառի եզրափակիչ մասը, ուր ասվում է, թե երեք բան են, որ հաստատում են պահում թագավորությունը. «Առաջինն այս՝ զոր գրեցաք, բարեպաշտություն հաւատոյ և ուղղութիւն գործոց: Եւ երկրորդ՝ սեպհական և հայրենեաւք իրաւացի ի նախնեաց ունել զթագաւորութիւն» (Ե, 99): Այս երկուսի առկայությունը հիմնավորելուց հետո Բաբելոն գրում է. «Իսկ զերրորդն, որ նա ինքն իմաստութիւն և հանձար այնքան ընկալեալ ունի և զընդարձակութիւն սրտի, մինչ զի իբրեւ զլոյս արեգական՝ առ ամենեւեւն քարոզեալ է: Վասն որոյ ինձ լուելի է, զի մի՛ թունցայց մարդահաճութեամբ իմն առ ականէ խաւսել...» (Ե, 100): Սրան հաջորդում են մաղթանքները, որ բանաստեղծական լիցք ունեն և կշռույթ, ուստի կարելի է տողատել իբրեւ ազատ ոտանավոր.

«...զի շնորհեացէ նորընծայ մերոյս թագաւորի Լեւոնի
զբարեպաշտութիւն Դաթի,
զԵզեկիայ, զՅովսիայ, զԿոստանդիանոսի,
զԹէոդոսի և զՏրդատայ,
զիմաստութիւն Սողոմոնի և Զարաթարելի,
զԴանիէլի և զՅոսեփայ,
զողորմութիւն Աբրահամու և զՅովքայ,
զիսնարիւթիւն Իսահակայ և Իսրայէլի,
զհեզութիւն Մովսէսի և զԴաւթայ,
զքաջութիւն Սողոմոնի և Տրդատայ...
Կեցցէ՛ և մնացէ՛
անոն Սորա ընդ արևու,
յառաջ քան զլուսին՝
ազգէ մինչև յազգ:
Ծագեցի՛ յաւորս Սորա արդարութիւն,
բազում խաղաղութիւն,
մինչև կատարեցի լուսին:
Տիրեցէ՛ Սա ի ծովէ մինչև ի ծով
և զետոց մինչև ի ծագս աշխարհի:
Առաջի Սորա թշնամիք իւր անկցի՛ն
և զհող ոտից Սորա լիզեցեն...
Մի՛ պակասեցէ ի զաւակէ Սորա այր,
որ նստցի յաթոտ թագաւորութեան
Ազգիս Հայկազեան,
այլ ըստ ատրցն երկնի՝
որ ի վերայ երկրի,
և ընդ պայծառութեան լուսաւորացն՝
եղիցի՛ մշտնջենաւորութիւն զաւակաց Սորա:
և պայծառութիւն յաշխարհի...» (Ե, 101):

Առանձին կարևորություն ունի ճառի այն հատվածը, ուր խոսվում է Լևոն Գ թագավորի ժառանգորդության օրինականության մասին: Դա կարծես Ոստանավոր պատմությանն առնական ծրագիրը լինի. շատ համառոտ գծված է Ռուբինյան տոհմի պատմությունը, որ խոր անցյալում հանգում է

հազարամյակներին, որոնք էլ ծագում են Դավիթ մարգարեից (հմտ. Խոր. Ա, գլ. ԻԲ): Ինչպես Ոստանավոր պատմության մեջ, այստեղ ևս հեղինակը խոսքն սկսում է Գագիկ հազարամյակ (Բ) թագավորից. «Ջի Սա է ի Ռուբինեանց անտի, որ արեանաւոր էին մեծի արքային Գագիկ հազարամյակ Մամիկունայ» (Ե, 100): Այս պարագան առկա է նաև Հեթում թագավորի չափածո հիշատակարանի մեջ:

«Ոստանավոր պատմություն Ռուբինեանց» վիպասանությունը արժեքավոր է նաև այն տեսակետից, որ արտահայտում է եթե ոչ Ռուբինյանների, գոնե Լևոն Գ թագավորի ըմբռնումները, կարծիքը հայոց պատմությանն այս կամ այն դրվագի վերաբերյալ (ասենք, Սյեհի գործունեության գնահատականը ևն):

Բաբելոնի նախադրության մեջ ասում է, որ Ներսես Ծնորհալին որպես խրատ «հանուրց ազգի» չափաբերել է հայոց պատմությունը՝ հնագույն նախնիներից մինչև իր օրերը: Լևոն Գ արքան, կարդալով Ծնորհալու Վիպասանությունը, հորդորել է Վահրամիս շարունակել այնտեղից, ուր հասել էր «սուրբ Հայրը»՝ Ծնորհալին.

«Ի սուրբ հօրէն անույ դարձեալ,
Որ մինչ ի մեզ եղև հասեալ,
Նահապետաց մերոց կացեալ,
Գործք և կամ բանք վիպասանեալ,
Ի ստուգագոյն արանց պատմեալ,
Եւ զոր աշօք մերովք տեսեալ,
Եւ ականջօք յալոց լուեալ:» (186)

Բաբելոնի խոստանում է օգտվել «ստուգագոյն» աղբյուրներից, հաղորդել վստահելի տեղեկություններ և վիպասանել նահապետների գործերն ու խոսքերը: Մեր ընդգծած բառը հեղինակն անշուշտ վերցնում է Ծնորհալուց, քայց ի՞նչ է հասկանում դրանով: Հարցի պատասխանը անուղղակիորեն նա տալիս է օժման ճառում. «զի զորս վիպասանէ ի թագաւորացն, ասէ... և զորս եպերէ, ասէ...» (Գ, 51): Այս կառուցվածքից ակնհայտորեն երևում է, որ վիպասանել նշանակում է ոչ թե սուսկ պատմել, վիպել, այլ՝ փառաբանել (եպերել բայի հակառակը): Ուրեմն, Բաբելոնի այսպես է հասկանում Ծնորհալու վիպասանութիւնը և մեզ էլ տվյալ տեսակը ճանաչելու, սահմանելու բանալի է տալիս:

Բանաստեղծի խոսքը հնչում է առողջ ու լիաձայն: Հայ գրականության հազվագյուտ էջերից է Բաբելոնի վիպերգը. շա՛տ քերթողների է վիճակվել ասարելու և ստեղծագործելու հայոց պետականության ծաղկուն շրջանում: Եզակի է հենց նրա ճակատա-

գիրը. ապրել և աշխատել արքունիքում, մշտապես շփվել թագավորի հետ և գրել նրա թեղադրանքով, գրել անցյալի ու ներկայի փառապանծ պատմությունը, վիպասանել, փառաքանել հայրենի մեծագործ արքաներին: Բայց հեղինակը գիտակցում է իրեն հաճմարարվածի պատասխանատու, ծանր լինելը, քրիստոնեական բարոյականության կանոններով շեշտում է իր անկարող և անարժան լինելը, հետո մտածում է, որ իր շարահարությունից Օնորհալու երկը չի տուժի, չի կորցնի փայլը, և անում է հետևյալ գեղեցիկ համեմատությունը.

«...Եւ ողղակի զայս դատեցեալ,
Թէ զմեր յիմար քանն և լքեալ,
Յարեւ ընդ քաննն նախագրեալ.
Չիցնի այսու տգեղացեալ,
Գեղեցկագոյն քանքն ճառեալ.
Որպէս յարհետուն է այս տեսեալ
Զոր նկարողքն են հանճարեալ,
Որք ի գունոցն գտեալն առեալ
Եւ ընդ ոսկւոյն շարալծեալ.
Ոչ թէ ընտիր ըզնա տեսեալ,
Կամ հաւասար ոսկւոյն եղեալ,
Այլ զի մաքուր ոսկին փայլեալ,
Լիցի նովա հրատարակեալ,
Յորմէ ոսկին չէ աղտեղեալ,
Այլ առաւել պայծառ ցոլցեալ»: (187):

Հասկանալի է, ոսկին՝ Օնորհալու Վիպասանությունն է, որ շատ բարձր է գնահատում Բաբունին (գեղեցկագոյն քանքն): Եվ շնորհալուն հետևելով, Վահրամ Բաբունին գրում է նույն 8-վանկանի տողերով ու եալ հանգով: Այս վերջինով պայմանավորված է մեզ հետաքրքրող երկերի մի առանձնահատկությունը: Լինելով քայա-կան վերջավորություն, այդ հանգը պարտադրում էր, որ խոսքի հիմնական, տիրապետող տարրը լինի քայը, իսկ սա նշանակում է, որ գործողությունը արագ զարգացում պիտի ունենա: Այստեղից է բանաստեղծական խոսքի շարժունությունը: Մյուս կողմից դա նպաստել է խոսքի հակիրճությանը, լակոնիզմին: Բայց եթե Օնորհալին հարյուրամյակների պատմությունն ամփոփելու էր մի քանի էջում, ապա Բաբունին գրեթե նույն ծավալի մեջ պատմում է միայն Ռուբինյան հարստության պատմությունը, այսինքն՝ գործողությունները պակաս սրբորոթաց են, և հեղինակը հնարավորություն ունի ավելի լայնորեն օգտվելու գեղարվեստական միջոցներից ու հնարանքներից, պատկերներն ավելի ամբողջացնելու և ավարտուն դարձնելու: Այսպիսի ամբողջական կտորներ են Գագիկ Բ Բագրատունու

(1042—1045), Թորոս Առաջինի (1100—1129), Լևոն Առաջինի (1129—1137) վերաբերյալ հատվածները: Ահա Թորոս Երկրորդի (1145—1169) երազը, որ նա քանում պատմում է հորը.

«...Տեսի,—ասէ,—յանուրջս եկեալ,
Այր մի աստէն փառագարդեալ՝
Ինձ նկանակ հացի տուեալ,
Յորոյ վերայ ձուկն էր եղեալ:
Իրեկ կայի ես հիացեալ
Եւ ի յառնէն գտուեալն առեալ,
Դո՛ւ, հա՛յր, տեսեալ զայն և հայցեալ,
Սակացն յիրացոյ ոչ կերակրեալ:—
Հայրն ի յորոյն զայս քան լուեալ
Եւ ի Տառնէ լուսաորեալ,
Խնդմտութեամբ առ նա գոչեալ.
—Յնձա՛, որդիդ բարգաւաճեալ,
Զի քոց նախնեացն եղեր զոգեալ,
Որ լետ չարեացոյ զոր կրեալ,
Եկին բարիքքն քեզ պանեալ...» (200)

Լևոն Ա-ը մեկնաբանում է որդու երազը: Ինչպես հաճախ, այստեղ ևս Բաբունին վիպական անհրաժեշտ մանրամասներով պատմագրում է Լևոնի մահը (1142 թ.), Թորոսի ազատվելը, վերադարձը հայրենիք, սխրագործությունները և «հայրենեացն տէր» դառնալը: Գեղարվեստական հաջող կտոր է, իրական հիմք ունեցող այն միջադեպը, երբ Թորոսը հույն գերի սևաստոսներին (ազնվականներին) փրկագնով ազատ է արձակում և ոսկին քաժանում հետևակ զորականներին.

«Զոր սևաստոսքն զայն տեսեալ
Եւ առ նա քան զայս խօսեցեալ.
—Եթէ ընդէ՛ր այդչափ տուեալ,
Զոսկիդ յանարգ մարդիկ ցըրուեալ:—
Որոց Թորոս պատասխանեալ
Անմիտ քանիցքն զոր լուեալ,
Թէ՛—Զի ըզնեզ դարձեալ կալեալ
Ըզսևաստոսդ աճցեն կապեալ»: (204—205)

Առհասարակ պիտի նկատել, որ տրամախոսությունները կենդանություն են տալիս հեղինակի խոսքին, նկատում գեղարվեստական որակի բարձրացմանը:

Բաբունին սիրով է ներկայացնում հայ գեներալի հաջողությունները, ինչպես ինքը կասեր՝ դրախտային կյանքը: Հիշենք Լևոն Բ թագավորին վերաբերող հատվածը: Նա թշնամական բոլոր ցեղերին հաղթելուց հետո բազմաթիվ ամրոցներ ու դղյակներ է կառուցում, ավելի շենացնում երկիրը: Եվ՝

«Յրանկաց ումբրուրն ծանուցեալ,
Եւ Յունաց կայսրն զայս լուեալ,

Յաստումական խմամոցն յուզեալ,
Եւ երկոքեանն թագ յղեալ:
Յալմամ Հայոց բովանդակեալ
Եւ ի Տարսուն քաղաքն եկեալ.
Կաթողիկոսն ի մէջ կացեալ,
Ջեկեղեցին անդ ժողովեալ.
Եւ օրինօք ըզնա օծեալ,
Տան Թորգոմայ թագաւորեալ,
Յարքայական աթոռ նշատեալ,
Ջեկեղեցի բարձրացուցեալ
Եւ աշխարհի շինող եղեալ,
Ջանկեալ Հայոց ազգըս կանգնեալ,
Եւ զտէրութիւնն նորոգեալ,
Խաղաղութեամբ զաշխարհ լըցեալ,
Իրրն զղըրախտ պըտղանտեալ: (215)

Վահրամ Բաբունին, ակալան, պատմում է մեծ մասամբ իր ժամանակի անցողիքները, լավատեղյակ է այդ ամենին: Հատկապես կարևոր են Լևոն Գ. թագավորին նվիրված էջերը: Եթե օծման ճառն ուղղված էր մեծ իրադարձության հանդիսականներին և արտասանվում էր թագավորի ներկայությամբ, հարմար չէր թագավորին գովերգելու («իմ լեզի է, զի մի՛ թուեցայց մարդահանությունս իմն ական է խօսել»։ Ե, 100), ապա Ուսանավոր պատմությունը գրված էր սերունդների, դարերի համար: Ուստի կարելի էր փառաբանել ազատորեն:

Եվ Բաբունին ակնառու տեղ է հատկացրել Լևոն Գ-ին, ըստ երևույթին ոչ թե լոկայն պատճառով, որ իր պատվիրատուն էր, այլ՝ որ ավելի հեշտ էր սեփական աչքով տեսածը, գիտցածը արձանագրելը: Պատահական չէ, որ Լևոն Գ-ը վիպերգի ամենակենդանի կերպարն է: Բաբունին ամենօրյա շփումով գիտե թագավորին:

Այս արքայի մասին խոսելիս նույնպես հեղինակը օգտագործում է անցյալ ժամանակը: Իհարկե, սա չի նշանակում, թե այդ էջերը գրված են Լևոնի մահից հետո: Առնվազն երկու բացատրություն կարող է ունենալ այս հանգամանքը: Նախ, վիպական պատումի ժամանակը հենց անցյալն է, ներկան կարծես կարող էր հասարակացնել խոսքը: Վերջինս կհնչեր որպես հանդիսատեսություն, որից Վահրամը զգուշանում էր: Երկրորդ, ամբողջ քերթվածի պատումը անցյալ ժամանակով է, և հարմար չէր լինի այլ կերպ վարվել, մանավանդ որ նույնահանգությունը ևս այդ էր թելադրում: Վերջապես, չէ՞ որ հեղինակի խոսքն ուղղված էր սերունդներին:

Վահրամ Բաբունին ոգևորությամբ հիշում է Լևոնի զինական հաջողությունները: Երբ հայոց արքան հաղթում է Գամիրքի թուրքերին, հարևան ժողովուրդները, թագավոր թե հպատակ՝

«Եղեն ափշեալ և զարմացեալ,
Խաղաղութիւն ընդ մեզ առեալ»: (236)

Լևոն Գ-ը մեծահոգի է, չի հիշում նրանց գործած չարիքները և ներում է «ի բոլոր սրտէ», սիրով կապվում նրանց հետ.

«Ջի էր հոգով բարեպաշտեալ
Եւ բարութեան գործովք ւցեալ»: (Անդ)

Նա մի հերոս է, որին փորձանքները չեն կարող ընկճել, և որն իր մեծագործություններից ու հաջողություններից չի մեծամտում, գոռոգանում: Արքան ոչ միայն ինքն է աննկուն, անասան, այլև հուսադրում, հանգստացնում է ուրիշներին: Նա «քաղցրատեսիլ», սթափ մտածող, «երկայնամիտ և ժուժկալեալ», պարկեշտ է, ներողամիտ, հյուրասեր ու առատաձեռն, բարեպաշտ մարդ, որ լիովին համապատասխան է օծման ճառում Բաբունու գծած՝ թագավորի զաղափարատիպին: Երիտասարդ Լևոնին մեծ դժվարությամբ են համոզում, որ թագավոր դառնա: Գահ բարձրանալով՝

«...Անհամեմատ առատացեալ,
Եւ զարքունիսն ընդարձակեալ,
Ըզպասատրոսն անցուցեալ,
Որ ի պաղատ անդր կացեալ:
Այլ և սելանն ընդարձակեալ,
Որով աղքատքն կերակրեալ
Եւ ամենայն որ յագեցեալ,
Ի կերակրոցն, որ պատրաստեալ:
Ջայս ինչ սահման արքայն առեալ,
Ջի յոր տեղի և հանդիպեալ,
Ջամենեսեան՝ որ անդ դիպեալ,
Ի յարքունուստ էր կերակրեալ:
Լիներ բազում այս պատահեալ,
Ջի ի բացեալ ուրեք եղեալ,
Յոր բովանդակ հեծեալն եկեալ,
Եւ այլք բազմք՝ որ ժողովեալ,
Անդ ամսօրեայ աուրս յամեալ
Եւ կերակրոց ոչ հոգացեալ,
Ջի յարքունեացն էին կերեալ
Առատապէս և վաղեալ...» (229)

Լևոն Գ-ը բարեպաշտական գործերով նույնիսկ գերազանցում է իր նախնիներին, ավելի շենացնում եկեղեցիները, մեծ պատիվներ, պարգևներ է տալիս ուսումնականներին, ավելացնում զորքի ռոճիկը.

«Եւ այսպիսի բարս ստացեալ,
Յամենեսեան բարերարեալ...
Էր ողորմած՝ որ կարօտեալ,
Եւ ունկընդիր՝ որ բողոքեալ.
Որովք էին զուարճացեալ
Տունս Հայոց և նորոգեալ»: (280)

Հեղինակը հիշում է և թագավորի երեք որդիներին, թագուհուն: Այստեղ ուշագրավ է ավագ որդու՝ Հեթումի (հետագայում թագավոր. 1289—1301) մասին հեղինակի նշումը.

«Ձայն որ յիմաստ գրոց կրթեալ
Եւ ի մարտից գործս վարժեալ»... (236)

Լևոն Գ թագավորին նվիրված հատվածով (էջ 237) փաստորեն ավարտվում է վիպասանությունը: Ծարունակությունը փոփոխվող հանգեքով է և հիշատակարանի հանգամանք ունի: Լևոնի թագավորության շրջանում մշտապես խաղաղ ու անվտանգ չի եղել հայոց ազգի կյանքը, բայց հեղինակը գրում էր վիպասանություն, մի տեսակ, որտեղ մնալ գուցե անհարկ է, բացառվում են, ուստի հեղինակն այդ մրնայլ բաց է թողնում բուն քերթվածում, բայց և չի կարող անտեսել, մոռացության մատնել: Դրան անդրադառնում է առանձին, անկախ հատվածի մեջ, չմոռանալով նաև ավանդական պարզաբանումը, թե ինչըն է դժբախտությունների պատճառը: Բայց այստեղ նոր բացատրություններ ունի իմաստասեր քերթողը: Ոմանք տարակուսանքով են նայում այդ հարցին.

«Ասեն՝ զիս՝ որ է ճշմարտեալ
Այս դատաստան, որ մեզ հասեալ,
Մի՞թէ միայն մեք մեղուցեալ,
Քան զոր յերկրի են բնակեալ...
Կամ թէ տաճիկն արդար եղեալ,
Յորոց ի ձեռքն մեք մատնեալ...» (238)

Րաբունին բացատրում է.

«Այս փոխարեն չարեաց ինչ չէ,
Կամ հատուցումն առ ի Տեանէ,
Այլ որ ոք ոչ ապաշխարէ՝
Ջրմանագոյնսն այսքմ կըրէ,
Քանզի խրատէ Տէր՝ զոր սիրէ,
Ջրնդունելի զորդին տանջէ» (238—239)

Աստված, ուրեմն, խրատում է նրան, ում սիրում է: Սա համեմատելի է հատկապես Ներսես Շնորհալու նույն կարգի բացատրություններին: Վահրամն ուսուցանում է, որ միայն հավատ ունենալը քիչ է, պետք է բարի գործերը միավորել, համատեղել հավատի հետ, որովհետև հավատը մեռած է, եթե ունայն է, թափուր՝ բարի գործերից: Եվ

եթե Աստված անմեղներին պատժում է, մեղավորների՛ն ինչ կտա:

Քանի որ գրում էր Ներսես Շնորհալու Վիպասանության շարունակությունը, Րաբունին աշխատել է նրան հարազատ մնալ փոքր, երկրորդական հարցերում ևս: Նրա դարձվածքները, կապող խոսքերը օգտագործում է և Րաբունին: Նա աշխատում է լեզվական աստղծով չհեռանալ Շնորհալուց: Եթե քերթվածի լեզուն համեմատենք Վահրամի փիլիսոփայական երկերի հետ, նկատելի է տարբերությունը: Վերջիններս, լինելով բանավոր խոսքի սղագրություն, հարուստ են ժողովրդա-խոսակցական տարրերով: Մեկնությունները հանկարծասից ամփել են լսարանում, նաև այդ պատճառով են խոսակցական լեզվի տարրերը հաճախադաս: Մյուս կողմից, մեկնարանվող երկերի ազդեցությամբ կան հունարանություններ: Մինչդեռ վիպաքերթվածը լեզվով հարազատ է Շնորհալուն²⁰: Շնորհալու քերթվածի հետ նույնանման կապ ունեն նաև Հեթում Բ թագավորի և Սմբատ Սյարապատի ոտանավորները²¹: Այս երկերի շարքում կարևոր տեղ ունի Վահրամ Րաբունու քերթվածը: Եթե Շնորհալու ըստեղծագործության մեջ արտացոլվել է հայոց պետականության վերահաստատման երազանքն ու հույսը, ապա Րաբունին, տեսնելով այդ երազանքը իրականացած, երգեց հայոց նոր պետության հզորությունն ու փառքը: Նրա՝ Լևոն Բ-ին նվիրված հատվածի նման խանդավառ տողեր Շնորհալուն կարող էր գրել միայն վաղ անցյալի, ասենք, Տիգրան Մեծի ժամանակվա մասին: Բայց դա ևս սթափ, չափավոր խանդավառություն էր, որովհետև ներկան ուրիշ տրամադրություններ էր արթնացնում բանաստեղծի հոգում: Րաբունին, որ ապրեց Կիլիկիայի հայոց պետականության ամենածաղկուն տարիներին, իր քաղաքացիական պարտքը կատարեց, ստեղծելու նրա կյանքի գեղարվեստական տարեգրությունը: Նշանավոր փիլիսոփային բացառիկ բախտ ու դեր էր վերապահված հայ բանաստեղծության մեջ:

²⁰ Մեկնությունների մեջ հատկապես շատ է հանդիպում կու եղանակիչը: Հմմտ. Վահրամ Րաբունի, Լուծմունք «Ստորոգությունացն» Արիստոտելի, Երևան, 1967, էջ 4, 60, 66, 86, 88, 102 ևն:

²¹ «Արարատ», 1869, թ. Բ, էջ 39. «Ռոմանոսը բարեպաշտի թագաւորին Հեթմոյ Բ»: Սմբատի համար տե՛ս Ղ. Ալիշան, Սխուման, էջ 71—72:



ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ*

ՄԱՄՔԱՆ

Մամքան գործել է 14-րդ դարի առաջին քառորդում, իշխան Հասանի դուստրն է:

1318 թվականին Մամքան որդու՝ Վախթանգի հետ գնել է Հերհեր գյուղի սուրբ Սիոն վանքի մոտ գտնվող հողը և նվիրել է վանքին: Ահա նրանց արձանագրությունը, որը փորագրված է սուրբ Աստվածածին եկեղեցու պատին:

«Կաման Ա(ստուծո)յ ես Մամքան դուստր Հասանա, իմ որդի Վաղթանկ զիմ ոսկի առանձանի գոնձէն (ապարանջանը) տվաք զս(ուր)բ Սիոնի տակի հողն վարդապետեմ առաք, ս(ուր)բ ոխտս տվաք: —...ի թվ(ին) 24Է (1318)»⁵¹:

Խ Ո Ւ Ա Ն Դ Խ Ա Թ Ո Ւ Ն

Խումանդ խաթունը Իվանե աթաբեկի որդի Ավագ աթաբեկի թոռ Ամիրպեկի դուստրն է: Նրա ամուսինն է Վաչուտյան Քուրդ Բ Անքերդցի իշխանաց իշխանը:

Մեզ հասած սկզբնաղբյուրներում Խումանդ խաթունի անունը տարբեր է. 1329 թ. Ուշի գյուղի Հոռոմ երեցի արձանագրության մեջ՝ Խումանդ, 1335 թ. արտագրված Ավետարանի հիշատակարանում՝ Խոյա, 1350 թ. Հովհաննավանքի «Թեոդոսի» արձանագրության մեջ՝ Խումանդ:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի № Ժ-ից:

⁵¹ Դիվան հայ վիմագրության, պրսկ 3, էջ 56:

Քուրդ Բ-ն Վաչուտյան իշխանական տան ամենագրեցիկ դեմքերից է: Նրա մասին ժամանակակից մի ձեռագիր հիշատակարանում գրված է, որ անվախ քաջամարտիկ էր ու զորավար, «պարծառաց և զարդու զաւակ Հայաստանեաց», «պահեր խնամօքն և ողորմութեամբ Աստուծոյ զգաւառս ի խաղաղութեան, և այլոց գաւառակցացն բազում կարեկից և օգնական լինէր»:

Խումանդ խաթունը մասնակցել է ամուսնու ձեռնարկումներին, ամուսնու բացակայության ժամանակ ղեկավարել է իրենց հայրենի տիրույթները՝ Արագածոտնն ու Նիգը, իսկ մնացած ժամանակ կազմակերպել ու հովանավորել է հայրենի տիրույթներում գտնվող կրթական-մշակութային օջախների կյանքը:

14-րդ դարի քառասունական թվականների սկզբին Քուրդ Բ-ն մահացել է և իշխանությունն անցել է նրա որդուն՝ Թեոդոս Զրքինին: Այս շրջանում ևս Խումանդ խաթունը ակտիվորեն մասնակցել է իշխանության կյանքին: 1250 թվականին Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու ներսում Թեոդոսը արձանագրություն է փորագրել, որով նվերներ է տվել վանքին: Արձանագրության շարունակությունը գրել է Խումանդ խաթունը: Ահա այն:

«Ես Խումանդ խաթուն ամուսին Ամբերդեցի Քրդին, մայր Զրքնին... կրկին հաստատեցի զվերոյ գրեալս...»⁵²:

⁵² Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը, էջ 92—94:

Խուանդ խաթունն այս արձանագրությամբ հաստատել է ինչպես իրենց կողմից ավելի վաղ, այնպես էլ որոշու կողմից Հովհաննավանքին տրված պարգևները:

Այս արձանագրությունը Խուանդ խաթունի, ինչպես նաև Վաչուտյանների վերջին արձանագրությունն է: Այս արձանագրությամբ էլ ավարտվում է Վաչուտյան իշխանական տան և այդ ընտանիքի շինարար ու մշակութանպաստ իշխանությունների շուրջ 160-ամյա պատմությունը:

ԲՈՒՍ

Զաքարիայի դուստր Բոբան Պոռչյան Ամիր-Հասան Բ իշխանի կինն էր:

1340 թվականին Բոբան այգիներ է նվիրել Վաչոց ձորի վերնաշեն գյուղի մոտ գտնվող Սպիտակավոր Աստվածածնի վանքին: Բոբան գրել է.

«...Ես Բոբէս Զատաւտկանց այգին, որ իմ հալալ գնուածք էր, տվի յանապատն Սպիտակավոր Ա(ստվա)ծածնիս իմ հոգոյ քածին... Թվիս 22Թ (1340), լամէն խարճէ ազատ»⁵³:

Այս արձանագրության տակ մոտավորապես նույն ժամանակ փորագրվել է ևս մեկ արձանագրություն, որով ամուսինները՝ Ամիր Հասան Բ-ն և Բոբան, այգի և այգու տեղ են նվիրել սուրբ Աստվածածնին:

ԵՂԻՍԱԲԵԹ

1365 թվականին Դավիթ գրիչը Բաբերթում մի Ավետարան է արտագրել: Նա իր հիշատակարանում առանձնակի սիրով է հիշել Եղիսաբեթին, որ Ավետարանը գրելու համար թանաք է եփել: Դավիթը գրում է. «ընդ նմին և զԵղիսաբեթ հաւատովորն, որ զթանաքն կու եփեր, յիշեսցիք ի ձեր սուրբ աղօթք»: Դավթի մեկ այլ հիշատակարանից երևում է, որ Եղիսաբեթը ոչ միայն եփել է թանաքը, այլ այն իր միջոցներով է պատրաստել «և զԵղիսաբեթ...», որ ազնական եղև սմայ թանաքին եփելովն⁵⁴:

Եղիսաբեթի եփած թանաքով գրված Ավետարանն այժմ գտնվում է Մատենադարանում:

ՄԱՐԻԱՄ

Մարիամն ապրել է 15-րդ դարի կեսերին, Զուղայում: Նրա մասին մի քանի կցկտոր տեղեկություն իմանում ենք իր արտագրած «Քարոզգիրք Գրիգորի Տաթևացույ» ձեռագիր հիշատակարանից, որտեղ նա հայտ-

նում է, որ «միայն զանունս (ուն)իմ և ոչ զիր և զծնողսն»:

Մարիամը ձեռագիրը գրել և ծաղկել է «Ի թիւ Հայոց ԶԵ (1456) ...ի Զուղայ»:

Գրիչ և ծաղկող Մարիամի արտագրած ձեռագիրն ըստ տեղեկությունների գտնվում է Իրանի Չարմահալ գավառի հայաբնակ Մամուտան գյուղում: 1952 թվականին նրա մասին «Էջմիածին» ամսագրի հուլիսի համարում հոդված է տպագրել Արամ Երեմյանը⁵⁵:

ՓԱՇԱՄԵԼԵՔ

Փաշամելեքն ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսում: Ամուսինն է Ստեփանոսը, որդին՝ Հովհաննեսը:

Ստեփանոսը և Հովհաննեսը տարածած մահացել են: Փաշամելեքը ծանր հարված է ստացել, որ նրան պատճառել է հարազատների մահը, որը «... սուգ անմխիթար եղող ծնողին»:

Փաշամելեքը ամուսնու և վաղամեռիկ որդու հիշատակը պահելու նպատակով «դառն արտի և ունայն ձեռօք սկսաւ գուգել զԱւետարանը...»⁵⁶:

Ավետարանի գրչությունը հանձն է առնում Կեցանա ձորի Սորավանք գյուղի սուրբ Փրկիչ վանքի քահանա, գրիչ Հովհաննեսը: Նա Ավետարանի գրչությունն սկսում է 1458 թվականին: Սակայն չի ավարտել սկսած գործը, զոհ է գնում պատահական աղետի: Ավետարանի գրչությունը շարունակում է Հովհաննես քահանայի ուսուցիչը՝ Հովհաննես աբեղան, որն արդեն տարիքն առած «... ծերացեալ և տկար» մարդ էր: Նա «հեծեծամաւք և դառն արտի, զի աչքս ի լուսոյ էր պակասեալ և կարողութիւնս խախտեալ» ավարտում է Ավետարանի գրչությունը:

Փաշամելեքն իր պատվիրած Ավետարանը նվիրում է Եղեգիսի վանքին:

Փաշամելեքի Ավետարանը նկարագրող է Ատոմ գրիչը: Այն այժմ պահվում է Մատենադարանում:

ԱԶԻԶ

1465 թվականին Արարատյան գավառի Եղվարդի վանքում գրիչ Մատթեոսը Ազիզ տիկնոջ պատվերով գրել է մի Ավետարան:

Ազիզն Ավետարանը պատվիրել է. «վասն յիշատակի հոգոյ իւրոյ և առն՝ Խերադիմին,

⁵⁵ Ա. Երեմյան, Տաանիմեզերորդ դարի մի անհայտ նկարչուհի, «Էջմիածին», 1952, հուլիս, էջ 48—50:

⁵⁶ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երկրորդ մաս (1451—1480), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1958, էջ 107—108:

⁵³ Դիվան հայ վիմագրության, սրակ 3, էջ 97:

⁵⁴ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 470:

և զավակացն՝ փոխեցեալոցն ի Քրիստոս, Վիրապորին և Աստուածաորին...»:

Ազիզն իր պատվիրած Ավետարանը նվիրել է Նորագեղի եկեղեցուն: Ահա նրա հիշատակարանը.

«Եւ ես՝ Ազիզս ընծայ և նուէրք ի սուրբ եկեղեցիս Նորագեղոյ՝ յիշատակ մեր ննջեցեալոցն և կենդանեացն»⁵⁷:

ԷԼԽԱԹՈՒՆ

Էլիսաթունը Խաչատուրի կինն է: Ծնողներն են Պատրանը (հայրը) և Էդը (մայրը):

Էլիսաթունը մահացել է երիտասարդ հասակում: Մահից առաջ նա ամուսնուն ու ծնողներին խնդրում է. «յիմ հալալ լընչիցն ինձ յիշատակ Աւետարան մի առէք և դիք ի գիտս Խոռոխուն, ի դուռն սուրբ Հրեշտակապետին»⁵⁸:

Խաչատուրը, Պատրանն ու Էդը կատարել են Էլիսաթունի խնդրանքը և Գրիգոր արքեպիսկոպոս 1543 թվականին գրել են տվել մի շքեղ Ավետարան և նվիրել են Խոռոխունի սուրբ Հրեշտակապետի եկեղեցուն:

ՎԱՐԴԻՍԱԹՈՒՆ

Ապրել է 17-րդ դարի սկզբներին, ծնողներն են Խաչատուրը, Թուրվանդը, ամուսինը՝ Գուլապին, որդին՝ Խերատինը, դուստրը՝ Խանթելը:

Վարդիսաթունի և նրա հարազատների ծննդավայրի մասին ոչինչ հայտնի չէ:

1608 թվականին Վարդիսաթունը գնել է 1235 թվականին գրված մի Ավետարան: «Արդ՝ ես անարժան Վարդիսաթոյս գնեցի զսբ. Աւետարանս ի հալալ ընչից և վաստակոց, և տվի գին սորա և առի ինձ յիշատակ». գրել է նա հիշատակարանում:

Վարդիսաթունն Ավետարանը նվիրել է Դավիթ քահանային, որպեսզի վերջինս իր կենդանության օրոք այն օգտագործի, իսկ մահից հետո դնի եկեղեցուն:

Վարդիսաթունի գնած Ավետարանը գրուել է Կարինի Արծնյան վարժարանում: Ավետարանի հիշատակարանը հրատարակվել է «Հանդես ամսօրեայ» հանդեսի 1961 թվականի համարում:

ԽԱՆՈՒՄ

Խանումը Այաշկերտցի է, ապրել է 18-րդ դարի առաջին կեսում:

⁵⁷ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, երկրորդ մաս, էջ 232:

⁵⁸ Յուզակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանոց ի Սեբաստիա. կազմեց Թորգոմ եպիսկոպոս Գուշակեան, Հանդես ամսօրեայ, 1925, էջ 377:

Խանումի մայրը մահմեդականություն է ընդունել և փորձել է աղջկան ևս մահմեդական դարձնել: Խանումը ամեն կերպ ընդվզել է մոր ցանկության դեմ, ճգնափություն է արել:

Մահմեդական շեյխերը ամեն ինչ արել են Խանումին կրոնափոխ անելու համար: Չցանկանալով զոհ գնալ նրանց, Խանումը գնալով է Արածանի գետը: Գետի ափերը նրա կիսախեղդ մարմինը ափ են հանել Մանազկերտի մոտ: Այստեղ էլ նրան գտել ու չարչարել են, համոզել, իսկ երբ վերջինս կտրականապես մերժել է հավատափոխ լինել, 1755 թվականին չարաչար տանջանքներով մահատակել են:

Նահատակ կույսի մասին ժամանակակիցները տաղեր են հորինել: Մեզ են հասել Պողոս երեցի, Կարապետ Համաճուր և մի անհայտ հեղինակի հորինած տաղերը:

Անհայտ հեղինակը այսպես է նկարագրել Խանումին.

Իմ սիրտս էլ վառեցիր սիրովդ, սուրբ Խանում,
Հեռովանց մալեցայ հոտովդ անպատում,
Փարատեց ցանքս, սիրտս լցվաւ խնոտում,
Ցաւոց դարման տրվար մարդկանց, սուրբ Խանում:

Վարդ բուսար փշոց մէջ, գոյնդ անմեան,
Գեղեցիկ պատկերիդ աշխարհք զարմացան,
Փայլուն և նախշունիկ աչքերուդ վերան՝
Սև ունքերդ սիրտ կու տաղէր, լոյս Խանում:

Ջերդ տատարակ ողջախոհ մնչէիր ի խղիղ,
Երգիդ մրմունջք լսողք մալեցան ձէնիդ,
Քեզ ձէնէկից դասին խումբք հրեշտակիդ,
Խայտան ցնծան բերկրին ձէնովդ, կոյս Խանում:


Ռահան, նարկիզ, քրքում, ծաղիկ նուրուֆար,
Թոփրաք խալալ պարտեզ դու մէջ ծաղկեցար,
Հեռացար մարդկանցմէ, տան մէջ

փակվեցար,
Բայց սրբութեան հոտդ լայտնեց քեզ,
Խանում:

Թագավորին երկնից քեզ նուիրեցիր,
Գլխուդ զարդարանքնին արիր ցանցիր,
Թողեր վարդ մանուշակ, շուշան քաղեցիր,
Ծով պաք աղօթք քո զարդք, ճգնող սուրբ Խանում:

Վերջապես արիւնովդ հոգիդ գնեցիր,
Կուսան և մարտիրոս անուն թողուցիր,
Հայրենիքդ քեզմով պայծառացուցիր,
Գերեզմանդ ցաւոց բժիշկ, սուրբ Խանում⁵⁹:

⁵⁹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Բ, Ե., 1944, էջ 463—464:



ՇԱՄՇԱԴԻՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ—ՎԱՆՔԵՐԸ

Պատմական Հայաստանի 15 աշխարհներից մեկը՝ Ուտիքը, ուներ 9 գավառ, որոնցից մեկն էր Տավուշը:

Հնում Տավուշ գավառը բավական ընդարձակ տարածք ուներ: Այն բռնում էր ներկայիս Ղազախի, Ադստևի, Թովուզի և Շամշադինի հողատարածությունները:

Տավուշ-Շամշադինի պատմությունը նույնքան հին է, որքան հին է Հայկական լեռնաշխարհի պատմությունը: Տավուշ գավառում մարդիկ ապրել են վաղ հնադարում: Դեռևս մեր թվարկությունից առաջ, առաջին դարում, Հայոց Արտաշես 1-ին թագավորը այս գավառը միացրել է Մեծ Հայքի թագավորությանը: Տավուշ-Շամշադինը իր աշխարհագրական դիրքով և կատարած բացառիկ դերով հոգևոր-մշակութային կյանքում հատուկ տեղ է գրավում:

Տավուշի Խորանաշատ վանքում են սովորել Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արեւելեցին, Գրիգորիս Աղթամարցին, Մարկոսը, Սուրենները և ուրիշներ: Այստեղ կառուցել են 4 վանքեր, բազմաթիվ եկեղեցիներ, աղոթարաններ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, որոնք հայ մշակույթի նշանավոր հուշարձաններ են հանդիսանում, և որոնց գոյությունը հարատևել է մինչև այսօր:

1. Խորանաշատ վանք

Հյուսիսային Հայաստանի Շոգևոր ու մշա-


կութային նշանավոր կենտրոն է հանդիսացել Խորանաշատ վանքը, որը գտնվում է Շամշադինի շրջանի Չինարի գյուղի հյուսիս-արևելյան կողմում, թեք սարալանջի վրա: Վանքը նշանավոր ճարտարապետական հուշարձան է, դպրության և գրչության կենտրոն: Վանքը կառուցվել է 13-րդ դարի առաջին կեսին, հռչակավոր Հովհաննես Վարդապետ Տաուշեցու ջանքերով: Վանքի ավագ խորանն ունի հյուսիս և հարավ նայող զույգ պատուհաններ: Պատերին կան բազմաթիվ թևավոր և քանդակազարդ խաչեր: Վանքի առաջ, ներսը և շրջակայքում թաղված են անվանի հոգևորականներ: Վանքը մի քանի անգամ վերանորոգվել է: Վանքը նվիրված է Սուրբ Աստվածածնին: Վանքի պատերին գտնվող ամենահին արձանագրությունն ունի ՈԿ (670+551) 1211 թվականը: Վանքի կառուցումն ավարտվել է հայոց ՉԲ (702+551) 1253 թ.:

Վանքի և շրջակայքի հուշարձանները մեծ արժեք են ներկայացնում միջնադարյան ճարտարապետության մեջ: Վանքի պատերին գրված արձանագրությունները արժեքավոր տեղեկություններ են պարունակում վանքի հիմնադրման, նվիրատուների, ժամանակի պատմական իրադարձությունների ու մշակույթի մասին: Վիճական արձանագրությունները արժեքավոր սկզբ-

նադիրներ են Հյուսիսային Հայաստանի և Տավուշ գավառի բաղաբակյան, սոցիալ-տնտեսական պատմության և մշակույթի ուսումնասիրման համար: Վանքի բոլոր որմերը ծածկված են տարբեր բովանդակու-

վել է եկեղեցին, որի կառուցումն ավարտվել է 1211 թ., ապա՝ գավիթը, որի կառուցումն ավարտվել է 1253 թ.:

Խորանաշատը մի ընդարձակ և հռչակալի կառուցվածք է, պսակված լայն ու բազմա-



Խորանաշատ վանքը

թյան արձանագրություններով, որոնց ուսումնասիրությունը նոր լույս կսփռի վանքի կառուցման հետ առնչվող բազմաթիվ հարցերի լուսարանման վրա: Վանքի պատերին կան շուրջ 28 արձանագրություններ, որոնք արժեքավոր են և՛ իրենց հնագրական հատկություններով, և՛ գծագրության եղանակով: Կան արձանագրություններ, որոնք փորագրվելուց հետո ներկված են: Այդպիսիները պահպանվել են եկեղեցու ներսի արևմտյան պատերին: Արձանագրությունների մեծ մասը նվիրատվական են, կան և հիշատակային բնագրեր: Վիմագրերի մեջ հիշատակվում է, որ ավագ խորանի ծախսերը տվել են Աբրահամ Կանաչողեցին (ՈԿԵ—1216 թ.) և Ավելդատ Ստրժեցին (ՈԿԹ—1220 թ.), որոնց ծնողների հոգու համար խոստացվել է կատարել տարեկան 2 պատարագ: Ինչպես այն ժամանակ ընդունված է եղել, սկզբում կառուց-

նիստ-բարձր թմբուկով և սրածայր վեղարով: Վանքը ունի 8 կրկնաճարկ խորաններ, և անունն էլ ստացել է Խորանաշատ, շատ խորաններ ունենալու պատճառով:

Խորանաշատ վանքը բաղկացած է եկեղեցուց և գավիթից (ժամատանից): Գավիթը Խորանաշատի կառուցվածքի մեջ իր առանձնակի տեղն ունի: Գավիթի ներսում կան չորս որմնասյուներ և նրանց համապատասխան կիսասյուներ, միացյալ կամարները պահում են ժամատան (Գավիթի) վրանաձև երդիկավոր ծածկը: Գավիթը զբլիսավոր եկեղեցուն կից է արևմտյան կողմից: Գավիթը թաղածածկ երդիկավոր շինվածք է, իսկ եկեղեցին կառուցված է առանց պուրհների, որի վրա բարձրանում է հսկա գմբեթ-վեղարը: Վանքի արևմտյան կողմում գտնվում է Սուրբ Կիրակի մատուռը, որի կառուցողական ձևը բնորոշ է 13-րդ դարի կառույցներին: Նրա մեջ թաղել

են անվանի հոգևորականների: Վանքի ժամատան հարավային սրբոց վրա քանդակված է արևի ժամացույց: Ժամատան արևմտյան մուտքի որմնապատերն ունեն առյուծաքանդակ խոյակներ, որոնցից մեկի վրա գրված է.

«Քրիստոս Աստուած Ողորմի Վանկանին,
Խաչս Նմայ է»:

...Մյուս խոյակի վրա գրված է.

«Քրիստոս Աստուած Ողորմի Գրիգորոյ,
Խաչս Նմայ է»:

Տաճարը զբաղեցնում է 10×15,5 մետր տարածություն: Նա ժամանակին նշանավոր ուխտատեղի է եղել: Այստեղ գործել է նշանավոր հոգևոր դպրոց: Վանքն ունեցել է 15 օրավոր հող, ձիթահանք, այգի:

13-րդ դարում, Զաքարյանների տիրապետության ժամանակ, խաղաղ, ստեղծագործական բեղմնավոր մի շրջան էր ինչպես Հայաստանի մյուս գավառների, այնպես էլ Տավուշ գավառի տնտեսական, մշակութային և շինարարական կյանքում: Զաքարյանների տիրապետության շրջանում է կառուցվել Խորանաշատ վանքը, Սուրբ Կիրակի մատուռը և երկու եկեղեցիներ: Նշված ժամանակաշրջանում կառուրելության է հասնում քանդակագործական արվեստը, մահարձանների կառուցումը և եկեղեցիների զարդարումը զարդաքանդակներով:

Վանքի շրջակայքում կա երկու գերեզմանատուն, մեկը ազնվականների, մյուսը՝ ժողովրդի համար, իսկ վանքի դռան և շրջակայքում թաղված են նշանավոր հոգևորականներ: Խորանաշատ վանքը մի ընդարձակ և հոյակապ կառուցվածք է՝ պսակված լայն ու բազմաճիստ թմբուկով և սրածայր վեղարով: Հատակագիծը քառանկյունի է, ներքուստ՝ խաչաձև, շնորհիվ անկյունների կրկնաճախի խորանների: Արևելյան կողմից կիսակլոր աբսիդն է, բեմով հանդերձ: Եկեղեցին և գավիթը ունեն կրկնաճախի խորաններ: Վերին խորանները սրահաձև են, կամարակապ՝ կոնսոլաձև աստիճաններով: Վանքը ունի 2 դուռ՝ մեկը եկեղեցու համար, մյուսը՝ ժամատան: Եկեղեցու հյուսիսային կողմում կառուցված են եղել վանական կացարաններ՝ վանքի միաբանների համար:

Վանքի հիմնադիր Հովհաննես Վանականը եղել է մեծ վարդապետ «...Եւ զբան վարդապետութեան ուսուցաներ այնոցիկ, ուր ժողովեալ էին առ նա յամենայն գաւառաց...» ինչպես գրել է Վանականի աշակերտ Կիրակոս Գանձակեցին: Վանքից

բազմաթիվ ձեռագրեր են մնացել: 1224 թ. Զաքոտ Խաղբակյանց իշխանի դուստր Վանենին Խորանաշատից մի մագաղաթե Ավետարան է ստացել, որը գրչագրել է Ալեքսան արեղան: 1223 թ. վանքի սան և հետագայում ուսուցիչ Ստեփանոս Աղթամարցին մի ձեռագիր է ընդօրինակել: 1252 թ. գրիչ Գրիգորը օրինակել է Վանական վարդապետի գործերից: 1283 թ. վանքում օրինակել է Գրիգոր Նարեկացու «Մատենանոյքերգութեան»: «Ավարտեցալ ի սուրբ և ի գերահռչակ ուխտիս Խորանաշատայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս»: 1415 թ. վանքի դպրոցը դեռ մեծ հռչակ ուներ: Հովհաննես Վարդապետ Տաուշեցին ծնվել է 1181 թ. Տավուշ (այժմ՝ Բերդ) ավանում: Մահացել է 70 տարեկան հասակում, 1251 թ. մարտի 18-ին, շաբաթ օրը: Իր ցանկության համաձայն թաղված է Վանքի մոտ, ժողովրդական գերեզմանոցում:

2. Կապտավանք

Պատմական Տավուշ գավառի հիմնավոր Վանքերից է Կապտավանքը, որը կառուցվել է 12-րդ դարի վերջին: Եկեղեցու պատի վրայի ամենահին արձանագրությունը ունի 1151 թ.: Եկեղեցու պատերին քիչ թվով արձանագրություններ կան: Տաճարի երկարությունը 11,5, իսկ լայնությունը 9 մետր է: Ահա արձանագրությունները՝

1. Ա.—ար. Պապիային ձոր Կիրակին
Եւ Հանէս արդեամբ կառուցի եկեղեցիս հոգոյ իմոյ... թվ
Ո (800+551) 1151 թ.
2. Անուամբ Աստուծոյ, Եւ Աջիշեր, որոյի Գորգորոյ... միաբանեցայ այս եկեղեցիս, բնակիչք եկեղեցուս գրեցին Բ. Պատարագ, Յայտնութեան ճրագալոյսին ինձ, միսն՝ ամուսնոյն իմոյ, կատարողք արհմեալ եղիցին»:
3. ՈԶԳ (883+551) 1284 թ.
Եւ Արխասան միաբանեցայ այս եկեղեցիս եւ հայրս, եւ միաբանքս գրեցին մին ար պատարագ սուրբ խաչին»:
4. «...Եւ Յովհաննէս միաբանեցայ եկեղեցիս:
Եկեղեցու կառուցումը տևել է 39 տարի:

3. Ծախմորատա վանք

Այս վանքը գտնվում է Ծաղկավան գյուղի մոտակայքում, Աղսու գետի ափին, ճանապարհի մոտ: Վանքն ունի մեկ եկեղեցի և երկու փոքր գավիթներ, հիմնադրված է 12-րդ դարի վերջերին, 1181 թ.: Եկեղեցու պատերին և գավթի մեջ կան քանդակահանգեղեցիկ խաչքարեր: Վանքի պատերին քիչ թվով վիմական արձանագրություններ կան,

մի մասն էլ քարերի մաշվածության պատճառով մնում են անընթեղների: Ահա արձանագրությունները.

1. «Եւ Տէր Գրիգոր շինեցի խորանիկս հրամանաւ Աստուածաբնակ Սադորնոյ մեծ իշխանի, վասն յիշատակի անջեցեղոց իւրոց եւ յախտեանականութիւն անձին իւրոյ որք սպասատրէք ի սմա, զիս գտէր Գրիգոր եւ ծնողքս իմ յաղօթս յիշեսցիք ընդ մօին և այլ զազգատոհմն...»:

4. Անապատ եկեղեցի

Այս եկեղեցին գտնվում է Հախում գյուղի շրջակայքում, Վարազա Սուրբ Նշան վանքի մոտ, կառուցումն ավարտվել է 1198 թ.: Եկեղեցին կառուցել է տվել Նոր Բերդի տեր իշխանաց իշխան Դավիթ Վասակի Բագրատունին: Այդ մասին վիմագիր արձանագրության մեջ կարդում ենք. «Նոր Բերդի տեր Բագրատունի Դավիթ իշխանն, որ շի-



Նոր Վարազա Ս. Նշան վանքը

2. «Յանուն Աստուծոյ, Եւ Դանիէլ եւ Ալլարայ միաբանեցայք վանքս եւ տուաք յայտնութեամբ ժամերա տղին...»:

3. «Կաման Աստուծոյ, եւ Սառայս միաբանեցայ եկեղեցոյս, եւ ետուն ինձ»:

4. «Կաման Աստուծոյ, եւ Յոհան միաբանեցայ եկեղեցոյս, եւ ետուն ի տանի Առաք. Յոհանն»:

Տաճարի երկարությունը 9 մետր է, լայնությունը՝ 7,5:

Անաց զեկեղեցին հրաշագան ի վանքն որ Անապատն կոչի, հուպ ի նոր Բերդին՝ առաջնորդութեամբ, ձեռնտութեամբ արքեպիսկոպոսին Յովհաննիսի քաղաքին Ծամբորոյ, եւ Գարդմանայ, եւ Երզնկանիցն, եւ Տէրունականին, եւ Տաուշոյ, եւ կողմանց իշխանութեան Վահրամայ իշխանին»:

Մի այլ վիմագրության մեջ գրված է. «Կաման Աստուծոյ, եւ Դավիթ որդի Վասակայ, թոռն Կիրիկէ (Գուրգեն) արքայի,

շինեցի զԱնապատս յիմ իշխանութեանս ձեռամբ վարպետին Մխիթարայ եւ Ռեւէ (647+551) 1198 թ. շինեցի զեկեղեցիս ձեռամբ հար Գրիգորոյ, եւ նորին Արքեանկին՝ Պետրոսի եւ եղբարց նորս Յովհաննիսի եւ Ագարայի:

Ով խափանէ դատարարտեացի ի տեսնել...»: Վիմական երկու արձանագրութիւնները հաւաստում են, որ Անապատ եկեղեցին կառուցել է տվել Նոր Բերդի տեր Դավիթ Բագրատունին, որը Լոռու-Տաշիր ձորագետի Կյուրիկե արքայի թոռն էր: Անապատի եկեղեցին կառուցվել է վարպետ Մխիթարի և Հայր Գրիգորի ղեկավարությամբ: Այն կառուցված է սրբատաշ քարերով: Եկեղեցու պատերի մեջ դրված են քանդակազարդ խաչքարեր:

5. Նոր Վարազա Սուրբ Նշան վանքը

Պատմական Հայաստանի Տավուշ գավառի տարածքի վրա գտնվող պատմական հուշարձանների մեջ իր ուրույն տեղն ունի Նոր Վարազա վանքը, որը կառուցվել է 13-րդ դարի առաջին կիսին, «Յոհան» վարդապետ Ժամխորեցու ղեկավարությամբ և Նոր Բերդի տեր իշխանաց իշխան Վասակ Դավթի Բագրատունու հրամանով: Վանքի կառուցումը ավարտվել է 1237 թ., իսկ օծումը կատարվել է 1240 թ.: Վանքը գտնվում է Հայտում գյուղի արևմտյան կողմում, սարալանջի վրա, Անապատի եկեղեցուն կից: Նոր Վարազա վանքի կառուցման մասին հարավային կողմի դռան վրա գրված է. «Ծինեցաւ եկեղեցիս ձեռամբ Յովհաննէս վարդապետի, հրամանաւ և իշխանութեամբ իշխանաց իշխան Վասակայ, որդւոյ Դավիթ Բագրատունու»:

Վարազա վանքը գտնվում է Վան քաղաքի մոտ, համանուն լեռան վրա: Այլագիւղների հալածանքներից անդվելով, Վարազա վանքի վանահայր Ղուկասը վերցնում

է Վարազա վանքի խաչը և 6 տարի թափառելով քերում և տեղադրում է Վասակաշեն վանքի մեջ:


1237 թ. գրված մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ի թ. ՌՁԶ (686+551) 1237: Ես Վասակ որդի Դավթի, որդւոյ Վասակայ ի Տանէ Բագրատունի, ի տոհմէ Դաւթայ Մարգարէի ի փառս Աստուծոյ կառուցի զեկեղեցիս, զոր շինեցի ի ձեռն Յովհաննու եւ ընծայեցի ի վանս ի Քրիստոս եւ հաւանութեամբ եղբարցս»:


Նոր Վարազա Վասակաշեն վանքը մի ընդարձակ և գեղեցիկ կառուցվածք է՝ պատկանում քարձրանիստ թմբուկով և սրածայր վեղարով: Վանքի հատակագիծը քառակյում է, ներքուստ՝ խաչաձև, անկյունագծի կրկնաձևով խորանների շնորհիվ: Արևելյան կողմից կիսակլոր արսիդն է՝ բեմով հանդերձ: Եկեղեցու վերին խորանները սրբահան են, կամարակապ՝ կոնսոլան ստորհաններով: Նոր Վարազա վանքը բաղկացած է եկեղեցուց և ժամատնից: Նախ կառուցել են եկեղեցին, ապա՝ ժամատունը: Վանքի մուտքը զարդարված է զույգ կամարակապ որմնասյուներով, որոնք խոյակներ ունեն: Եկեղեցու սեղանատունը նման է ժամատան՝ կենտրոնում ունենալով զույգ մույթեր, որոնց վրա հենվում են պատերից սկսվող և միմյանց խաչվող կամարները:

Ավելի քան յոթ ու կես դար է, ինչ կանգուն մնում է Նոր Վարազա վանքը, և մեր կառավարության կողմից պահվում է իբրև հայկական հին ճարտարապետության նշանավոր հուշարձան: Վանքը նշանավոր է եղել իբրև մշակույթի և մտքի լուսավորության կենտրոններից մեկը: Վանքը ծառայել է որպես նշանավոր ուխտատեղի, ման որպես դատարարական օջախ:

ՎԱՀԱՆ ՎԱՆՅԱՆ

² Տեղեկագիր, 1940 թ., էջ 25:





Ց Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՆՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՆԱԳՐԵՐԻ*

№ 505

ՈՍԿԵՄԱՏԵԱՆ
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
(Պրակ 26)

Թերթերը՝ 42:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 83×24.7×0.5 սմ.:— Նյութը՝ մի քիչ դեղնած դիմացկուն թուղթ:— Կազմը՝ բարակ ստվարաթուղթ:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միապուն:— Դատարկ թղթեր՝ չունի:— Տողերը՝ 85—86:— Գծումները՝ գործարանային գծավոր թուղթ:— Գիրը շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը և պատվիրատուն՝ Գեորգ Միմքեշյան (1870—1951):— Ժամանակը՝ 1940-ական թթ.:— Վայրը՝ Ստամբուլ:— Ծանոթություն՝ Զեռագիրը նվեր է ստացվել Ստամբուլից 1976 թ., գրողի որդի Եղվարդ Միմքեշյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— 1210. Ա.Բ.Գ.ի դասը (Եղիշե եպս. Խորեան).

Թ. 1բ.— 1211. Սուրբն Սավա և արդարությունը (Սերափիական գրականություն) (թրգմ. Գեորգ Միմքեշյան).

Թ. 8բ.— 1212. Արծիւը կը սաւառներ ... (Զապէլ Եսայեան).

* Ծարումակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից և 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ-ից և ԺԱ-ից:

Թ. 4բ.— 1213. Ծաղկավաճառ աղջիկը (Ծուռանիկ Կուրդիմեան).

Թ. 5ա.— 1214. Ծանապարհ խաչի (Դանիել Վարուժան).

Թ. 5բ.— 1215. Ս. Մեսրոպի մահը (Առաքել Բաբականեան) Լէօ.

Թ. 6բ.— 1216. Վազող ջուրին (Միքայել Նալպանդեան).

Թ. 7ա.— 1217. Վարժություն մահուան (Վահան Թեքեան).

1218. Զատիկը (Մուշեղ եպս. Սերոբեան).

Թ. 8ա.— 1219. Մարդը Աստուծոյ պատկերին մեան (Մեսրոպ Արքեպ. Նաթոյեան).

Թ. 9ա.— 1220. Ունայնութիւն, Ունայնութեանց... (Յովհաննէս Հիսարեան).

Թ. 10ա.— 1221. Երանուհին (Յովհաննէս Հիսարեան).

1222. Կաղա՛նդ, Կաղա՛նդ ... (Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանին, 1944-ի ափսոսալի տարւոյն սեմին վրայ գրուած) (Եղուարդ Գէ. Միմքեշեան).

Թ. 11ա.— 1223. Օտարական սէ՛րը ... (Անգլիական գրականութիւն) (Rudyard Kipling).

Թ. 14ա.— 1224. Հայուն սիրական թշուաններէ՛ն՝ տխակը (Սեպուհ Ստեփանեան).

Թ. 15բ.— 1225. Ոսկի խօսքեր (Յակոբ Ոսկան).

Թ. 16ա.— 1226. Այրին (Երուսմդ Օտեան).

Թ. 17ա.— 1227. Մղձավանջ մը (Զարմայր Ծ. Վրդ. Կեզիրեան).

Թ. 18բ.— 1228. Տուն և ընտանիք (Խրիմեան Հայրիկ).

Թ. 19ա.— 1229. Հայուն հայրենիքը (Գրիգոր Զիլինկիրեան).

Թ. 20ա.— 1230. Խաչը (Առաքել Կ. Պետիկեան) Գիսակ.

Թ. 21ա.— 1231. Բարոյական մթնոլորտը (Բրոֆ. Յակոբոս Մեհիգեան).

Թ. 22ա.— 1232. Կրիայ և շուն (Յակոբ Յ. Պարոնեան).

Թ. 23ա.— 1283. Իրաւունք և պարտք (Նախապետ Ռուսինեան).

Թ. 23բ.— 1284. Գար-ֆէրրա (Վախան Մաղէգեան).

Թ. 24բ.— 1285. Երգ... (Ռումէն գրականութիւն) (Michail Eminescu).

Թ. 25ա.— 1286. Մտածումներ (Ռումէն գրականութիւն) (Vasileh Konta).

Թ. 25բ.— 1287. Եղեկորականութիւն և կեանք (Կարապետ Յ. Փաղէեան).

Թ. 27ա.— 1288. Գիտացիւն և երգը (Կոմիտաս վարդապետ).

Թ. 27բ.— 1289. Աշխատանք մը և Ս. Ղազարու վանքը (Maurice Barres).

Թ. 28բ.— 1240. Քու «Հայր-մեր», մարի'լ... (Տիգրան Կամարական).

Թ. 29ա.— 1241. Կարօտը ... (Յովհաննէս Թումանեան).

Թ. 29բ.— 1242. Մութէն դէպի լոյս (Զարմայր Տ.Վ. Կէզիւրեան).

Թ. 30բ.— 1243. Դիմակները (Զարմայր Տ. վրդ. Կէզիւրեան).

Թ. 31բ.— 1244. Այցելութիւն մը ի գերեզմանատուն (Ամմէտ Միտիաթ).

Թ. 32բ.— 1245. «Միլօ»ի Աստղիկին (Դանիէլ Վարուժան).

Թ. 33ա.— 1246. Կինը (Միպիլ).

1247. Զուլտմի օրերէն յիշատակ մը Եղուարդիս լուսանկարին) (Գեորգ Սիմքէշեան).

Թ. 34ա.— 1248. Վտանգաւոր կեանքը (Պարոյր Բ. Քէշեան).

Թ. 35ա.— 1249. Օշականի սուրբը (Առաքել Բաբայանեան) Լեօ.

Թ. 36ա.— 1250. Հայ բոշաները (Վրթանէս Փափագեան).

Թ. 37բ.— 1251. Կրօնք և բարոյական (Պարոյր Բ. Քէշեան).

Թ. 38բ.— 1252. Պալատին մէջ ուրբաթ գիշեր մը (Kadircen Kafil).

Թ. 40ա.— 1253. Կին և արուեստ (Եղուարդ Գ. Սիմքէշեան).

Թ. 41բ.— 1254. Տղա'ք ... (Վախան Թէքէեան).

